

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Պ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՆԴԻՍ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՏՄՈՆՏՈՅ ՏԷ ԱՄԻՁԻՍ ԻՏԱԼԱՑԻՈՅ¹

Այս ապշութենէն սթափելու հա-
մար, ուրիշ բան չկայ բայց մտնալ հա-
ղարաւոր անձուկ փողոցներէն մէկը որ
Ստամպուլի բլրոց կողից վրայէն կը սո-
ղան, Հօս² կը տիրէ խորին խաղաղու-
թիւն մը, և մարթ է հանգստեամբ նկա-
տել բոլոր իր պատկերներովն այն խոր-
հըրդաւոր և նախանձոտ Սրեկեքն³ որ
Սսկեղլեր միւս ափանց վերայ՝ եւրո-
պական կենաց աղմկալից խառնակու-
թեան մէջ՝ միայն վաղանցուկ վայր-
կեաններ կը տեսնուի, Հօս պարզաբար
ամենայն ինչ արեւելեան է, քառորդ մի
ժամու ճամբայ ընելէդ ետքը՝ ալ ոչ ոք
կը տեսնուի և ալ շատաւ մը չի լսուիր:
Աստի անտի բոլոր փայտէ տուններ են,
հաղարաւոր գոյներով նկարակերտեալ,
որոնց մէջ առաջին դատիկոնը ցցուած
է ստորին դատիկոնին վերայ, և եր-
կրորդն առաջնոյն վերայ: Պատուհան-
ներն առջևին տեսակ մը բարձրաւան-
դակ ունին, ամեն կողմանէ ապակեաւ
փակեալ, և ամեն փողոցը ծակած փայ-
տեղէն վանդակներով գոցած, որ կը

կարծուին նոյնպիսի տնակներ գլխաւոր
տուններէն կախուած, և ճամբաներուն
տխրութեան և դաղտնութեանց խիստ
նորաձև երեւոյթ մը կու տան: Քանի մը
տեղեր այնպէս նեղ են ճամբաներն՝ որ
հանդիպակաց տուններուն՝ ի դուրս կար-
կառեալ մասերը գրեթէ կը դաշին, և
այսպէս երկայն միջոց կը քալուի այն
մարդկային գառազիղներուն հովա-
նեացըներքև, ճիշդ տաճիկ կանանց ոտ-
քերուն տակ՝ որոնք օրուան մեծ մասն
հօն կ'անցընեն, տեսնելով միայն երկնից
ամենաշուրթ գիծ մը: Դռները բոլոր
փակուած են. ստորին դատիկոնին պա-
տուհանները վանդակապատ. ամենայն
ինչ կասկած և նախանձ կը չնչն. կար-
ծես մենաստանաց քաղաքէ մը կ'ան-
ցնիս, երբեմն երբեմն կը լսես մեծա-
ձայն քրքիլ մը, և գլուխդ վերցնելով
կը տեսնես ճեղքուածէ մը խոպոպեաց
հիւս մը կամ փայլակնացայտ բիւր մը,
որ մէկէն աներեւոյթ կ'ըլլայ: Տեղ տեղ
յեղակարծուց վերայ կը հասնիս աշխոյժ
և դաշն ձայնիւ խօսակցութեան մը՝
ճամբուն մէկ կողմէն մէկալը. այլ յան-
կարծակի ոտքիդ ձայնէն կը դադրի:

¹ Տես Հատոր ԼԵ, Պրակ Գ, էջ 238:

Պրնւ Դ.

երբոր կ'անցնիս, ով գիտէ վայրկեան մը որչափ շաղկապութեանց և գաղտնաշուկէ տարիանաց ցանցեր կը խառնակեն։ Ոչ ոք կը տեսնաս և հազար աչքեր գրեզ կ'ունեն։ Միայն ես՝ և կը սգստեմ թէ ամբողջի մը մէջ ես. կ'ուզես անցնիլ տառնց տեսնուելու, կը թիթեկցնես քայլերդ, հանդարտիկ կ'ընթանաս, աչքդ կը չափես։ Դուռ մը որ կը բացուի կամ պատուհան մը որ կը գոցուի, մեծ շառաչի մը պէս զբեզ սաստկապէս կը ցնցէ։ Կարծես թէ պողոտաները պէտք են ձանձրանալի ըլլալ. այլ բոլորովին հակառակն է։ Դրայրը կանանց մայրաքաղաք մը՝ ուսկից կ'ելլայ ճերմակ մինարէ մը. կարմրագոյն հագած տաճիկ մը որ կու գայ դէպ ի քեզի. սև աղաթիւն մը՝ դրան մը դիմաց կեցած. կարսկական գորգ մը պատուհանէ մը կախուած, բաւական են այն պիտի կենդանի և ներդաշնակաւոր պատկեր մը ձևացնելու, որ կ'արձաշանաս ժամ մը նկատելու զայն։ Քովէզ անցնող քիչ մարդիկներէն ոչ ոք կը նայի քեզի։ Միայն երբեմն ետեւդ կը լսես կանչել. — Կեաւոր (Սնհաւաւ)։ — Երբոր դառնաս, կը տեսնաս տղու մը գլխոյն աներեւոյթ ըլլալը փեղկի մ'ետեւ։ Ուրիշ բոլորովին տաճիկ և բոլորովին լուսնիստ ճամբու մը մէջ, յանկարծակի կը լսես եղջեր մը ձայն և ձիոց զրնդիւն մը. կը դառնաս, ինչ բան կայ, Հագիւ աչացդ կը հաւատաս։ Մեծ համաշխարհիկ կառք մ'է, որ երկու անուոց հետոց վերայ առաջ կու գայ՝ զոր տեսած չէիր, տաճիկներով և եւրոպացիներով լեցուն. իր նշանազգեստ հագած դռնապանով և իր գնոց ցանկին թղթեակով, ինչպէս վենետիկ կամ Բարիզու դրամովէ մը։ Այս երեւումն ինչ նորութիւն որ կը բերէ այս ճամբաներէն մէկուն մէջ, անկարելի է խօսքով բացատրել. քեզի ծաղրածութիւն մը կամ վրիպակ մը կ'երեւայ, և ծիծաղելիք կու գայ, և ապշած կը նայի այն սայլին իբրև թէ երբեք տեսած չես։ Համաշխարհիկ կառքն անցնելուն պէս, կարծես թէ եւրոպայի

կենդանի պատկերն շնչաւ, և Ասիոյ մէջ կը դառնա՛իս՝ ինչպէս թատրոնի մը մէջ տեսարանի փոխուելուն։ Այս ամայի պողոտաներէն ելիր բայ փոքր հրապարակներու մէջ, հակադաճ ասիներով գործէ բոլորովին հովանաւորեալ։ Մէկ կողմէն աղբիւր մը կայ, ուսկից ըմպեն ուղտը. միւս կողմանէ սրճարան մը, դրան դիմաց տարածուած բաղնիքներու գծով մը, և քանի մը ընկողմանեալ Տաճիկք որ կը ծխեն. և մեծ թղթի մը դրան քով, որթէ մը պատասխալ, որուն ուռերը մինչև ի գետին կը կախուին, երեցընելով տերեւ տերեւ Մարմարա ծովուն բացակայ կապոյտն և քանի մը ճերմակ առազաստիկներ։ Սպիտակափայլ լոյս մը և մահաշուշ լուսովիւն մը՝ կու տան այս բոլոր տեղեաց այնպիսի դրոշմ մը ընդ մեծաշուքն և ընդ մեղամաղձիկ՝ որ զանոնք անմուռաց կ'ընեն, թէպէտ և մէկ անգամ տեսնուած ըլլան։ Յառաջ, յառաջ կ'երթըցուի, գոգցես այն զանխուլ հանդարտութենէն հրապուրեալ, որ առ սակաւ սակաւ հոգւոյդ մէջ կը մտնէ՝ թիթեկ քրնէութեան մը պէս, և քիչ ատենէն ամենայն զգացումն հեռաւորութեան և ժամու կը կորսուի։ Նոր մեծ հրդեհի մը հետքով ընդարձակ տեղեր կը դառնան. զառ ի վայրեր՝ ուր կը տեսնուին միայն ցրուած քիչ տուններ, որոնց մէջ խոտը կ'ածի, այժու ճամբաներ կը աղան. բարձրակատար կէտեր, ուսկից աչքով կը բովանդակուին ուղիներ, անձկագոյն փողոցներ, պարտէզներ, հարիւրաւոր տուններ, և մէկ կողմէ մ'ալ չի տեսնուիր ոչ մարդիկեղէն արարած մը, ոչ ծխոյ ամպ մը, ոչ բաց դուռ մը, և ոչ բնակութեան և կենաց պզտիկ նշանակ մը. այնչափ որ կրնայ կարծուիլ թէ այն հազգին քաղաքին մէջ միայնակ ըլլաս, և եթէ քիչ մը վրան մտածես, գոգցես յերկիւղէ պիտի բռնուիս։ Բայց զառ ի վայրն իջիր, հասիր այն նրբափողոցներէն մէկու ծայրն, ամենայն ինչ փոխեալ է։ Ստամպուլի մեծագոյն ճամբաներէն մէկուն մէջ ես, երկու կողմանէ հոյակապ շէնք, ուր ալ

չեն բաւական ըլլար աչքերն 'ի զարմա-
ցումն: Կը քալես մղկիթներու, հովա-
նոցներու, մինարէներու, կամարակապ
ճեմելեաց, մարմարիոնէ և զոճազմէ
աղբերց, արաբական քանդակներով և
ոսկեղէն արձանազրութեամբք շողո-
ղուն Սուլդանաց փառաւոր շիրիմներու,
միւսինով ծածկուած պատերու մէջ, ե-
ղնափայտի երփն երփն ազուցիկ տա-
նեաց տակ, զարարազեղ բուսոյ աճման
մը ստուերաց ներքև որ ցանկապատ որ-
մերէն և պարտիզաց ոսկեզօծ վանդակ-
ներէն վեր կ'ամբառնան, և ճամբան
անոյջ հոտով կը լեցնեն: Այս փողոց-
ներուն մէջ ամեն մէկ քայլին կը հան-
դիպին կառքեր փայայի, սպաներու,
պաշտօնակալաց, բանակի աշկեաց,
մեծամեծ տանց ներքինիներու, ծա-
ռայից և պատառաբոյժներու թափօր
մը՝ որ պաշտօնէից մէջ կ'երթեկեն:
Մեծ պետութեան մայրաքաղաքն հօս
կը ճանչցուի, և հիացմամբ կը նկա-
տուի իր բոլոր շքեղութեանը մէջ: Ամեն
կողմ սպիտակութիւն մը, ճարտարա-
պետութեան վայելչութիւն մը, ջրոց
խոխոջիւն մը, հովանեաց զովութիւն
մը՝ որ մեղմաձայն երաժշտութեան մը
պէս զգայութիւնքը կը փայփայէ, և
ուրախարար պատիւներնով միաքը կը
լեցնէ: Այս ճամբաներէն մեծ հրա-
պարակները կը հասնուի ուր կայսերա-
կան մղկիթները կը բարձրանան, և այս
ամբարտաւերուն դիմաց զարհուրած
կը մնայ մարդ: Ասոնցմէ ամեն մէկը
իւրեւ կապ մը կը ձեռնընէ պղտիկ քա-
ղաքի մը վարժոցաց, անկելանոցաց,
զպրոցաց, մատենադարանաց, միջերա-
նոցաց, բաղանեաց, որ գրեթէ չեն ի-
մացուիր, ահագին գմբեթէն՝ որուն չորս
կողմն են՝ ճմլուած, ճարտարապետու-
թիւնն՝ որ ամենապարզ կը կարծուէր,
ընդ հակառակն կը ներկայացընէ առան-
ձիւն հանգամանաց զանազանութիւն
մը՝ որ հազար կողմանէ աչքը կը քայէ:
Կապարով պատած գմբեթիկներ են,
տարօրինակ ձեով տանիքներ՝ որ մէկը
միւսին վերայ կը բարձրանայ, օդա-
թռիչ ճեմելիք, մեծ կամարակապ սը-

րահք, սինազարդ պատուհանք, դրա-
սանգաւոր կամարք, ճախարակեալ մի-
նաքէք, պաղաքարէ խղիկներով ծա-
կտակէն շինած պատշգամաց ցանկեր.
հոյակապ դռներ և աղբիւրներ՝ որ
կարծես ժապաւեններով զարդարուած
են, ոսկեով և հազարաւոր գոյներով
խայտաճամուկըրած պատեր. ամենայն
ինչ նկարակերտ, քանդակեալ, թե-
թե, յանդուպն, ստուերատեալ կաղ-
նիներով, ուսկից կ'ելլեն թռնոց աւ-
պեր որ դանդաղ պտոյտներով գմբեթ-
ներուն չորս կողմը կը թռչալին, և
ահագին շինուածոյն ամեն թագստոց-
ները կը լեցունեն ներդաշնակու-
թեամբ: Հօս կը սկսիս զգալ բան մը
որ գեղեցկութեան զգացմունքէն աւել-
լի խոր է և աւելի հզօր: Այն փառաւոր
շինուածքն՝ որ են իւրեւ վիթխարի վի-
մակարծ հաստատութիւն մը՝ զաղա-
փարաց և զգացմանց կարգի մը մերին.
ներէն տարբեր, որոնց մէջ ծնած և ա-
ճած ենք, որ գոգցես հակառակորդ
ցեղի մը և հաւատոյ մը կմախքն են, որ
կը պատմեն մեզի վսեմ գծից և քաջա-
յանդուպն բարձրութեանց համը լե-
զուով մը Աստուծոյ մը փառքը որ մերի-
նը չէ և ժողովրդեան մը որ զմեր հալքը
դողացուցեր է, — կ'ազդեն պատկառանք
մը խառն ընդ անվատահութեան և եր-
կիւզի, որ զառաջինն կ'ընկճէ զհետա-
քըքրութիւնն և հեռու կը բռնէ ա-
նոնցմէ: Կը տեսնուին հովանաւոր գա-
ւիթներու մէջ Տաճիկներ՝ որ լուաց-
մունքնին կ'ընեն աղբերց քով, մուրաց-
կաններ՝ կծկած կամարասեանց ոտքը,
քողարկեալ կանայք որ կամարակապ-
ներուն ներքև յուշիկ կը ճեմեն. ամե-
նին անդորրութիւն, և իւր ստուերա-
ցեալ տխրութեան և հեշտութեան գու-
նով մը, որ աղէկ չի հասկցուիր ուսկից
առաջ կու գայ, և որուն վերայ միտքն
առեղծուածի մը պէս կը կենայ և կ'աշ-
խատի: Ո՛րչափ հեռու են կալադա և Բե-
րա: Զքեզ կը կարծես ուրիշ աշխարհքի
մը և ուրիշ ժամանակի մը մէջ, Մեծին
Սիւլէյմանայ և երկրորդ Պայազուի
Ստամպուլին մէջ, և զարմացման կեն-

դանի զգացմունք մը կ'ունենաս՝ երբոր այն հրապարակէն ելլելով և աչքէդ կորսնցնելով յամանեանց զօրութեան քննադէն հոյակապ յիշատակարանքը, կը գտնաս զքեզ փայտեայ, աղքատին, խարխալած, լի աղետեղութեամբ և խեղճութեամբ կոտորանքներու պէջով մէջ։ Քանի որ առաջ կ'երթաս՝ տունները կը գունատին, սարսիհները կը փլչին, աղբոց առաջանները մամուռով կը ծածկուին. կը գտնաս փոքր մզկիթներ, ճեղքուած պատերով և փայտէ մինալէններով, մարենիններով և եղիճներով պատած. քանդուած մեծակառոյց շէնքեր, ջահախառն սանդուղներ, փլատակներէ ծածկուած՝ արգիլուած անցքեր, հինաւուրց թաղեր անհուն տխրութեամբ մը, ուր ուրիշ գրողին չի լսուիր՝ բայց եթէ բազէից և արագլաց թեոց սաւառնաձայն շառաչն և մենաւոր միւսկուլներ մը կ'ողորջային ձայնն, որ Աստուծոյ խօսքը կ'ազդակէ թագուն մինարէի մը բարձրէն։ Չկայ քաղաք մը որ լաւագոյն քան զՄոսկովի ժողովրդեան բնութիւնն և փիլիսոփայութիւնը ներկայացնէ։ Այն ամեն բանն որ մեծ է և գեղեցիկ, Աստուծոյ է կամ Սուլթանին՝ յերկրի Աստուծոյ պատկերին. բոլոր մնացածն անցաւոր է և աշխարհային իրաց խորին զանցառութեան մը կնիքը կը կրէ։ Հովուաց սերունդն ազգեղեր է. այլ իր բնածին սէրը դաշտային բնութեան, հայեցողութեան և անգործութեան, մայրաքաղաքին պահանջներէ, չաշխատիր, չի մտածեր, չի ստեղծեր. քաղաքականութիւնը կը խորտակէ իր դաներն և իրեն ճամբաներուն վերայ կ'արշաւէ. ինքը կը քնանայ և կ'երազէ մզկիթներու ստուերացը տակ, և կը թողու որ դործեն։ Լուծուած, ցիրցան, անգեղեցիկ քաղաք մ'է, որ մանաւանդ ստատանդական ցեղի մը կայանքը կ'ընծայէ, քան թէ անսասան Տէրութեան մը զօրութիւնը. մայրաքաղաքացի ահագին ուրուագիծ մը. մեծ տեսիլ մը՝ քան թէ մեծ քաղաք մը։ Եւ կարելի չէ անոր վերայ ստոյգ

գաղափար մ'ունենալ՝ եթէ բոլոր չի պարտադրուի։ Պէտք է մեկնիլ առաջին բլրէն, այն որ կը ձևացնէ եռանկեան ծայրն, և Մարմարա ծովէն թըրշած է։ Հօս է, կրնայ ըսուիլ, Ստամբուլի գլուխն. հոյակապ շինուածոց թաղ մը, լի յիշատակօք, մեծ վայելչութեամբ և լուսով։ Հօս հին պալատն, ուր առաջ Բիւզանդիոն կը բարձրանար իր միջնաբերդով և Արամազդայ տաճարով, և յետոյ Պալատիկայ կայսրուհոյն պալատն և Արկադիոսի բաղանիքն. հօս՝ Սուրբ Սոփիայ մզկիթն և Ամէտայ մզկիթն, և Աթ մէյտանն՝ որ հին իրօստորմոսի տեղը էր դրաւէ, ուր պիտի մտնէ և կը ճեպ Ոլիմպոսի մը մէջ, կերպասեղէն և ծիրանի հագած ամբոխի մ'աղաղակաց մէջ, ոսկեղէն քառաձիգ կառքերը կը թռչէին՝ ականակուռ փայլեալ ինքնակալաց առջև։ Այս բլրէն կ'իջնաս քիչ խոր հովտի մը մէջ, ուր կը տարածուին պալատան արեւմտեան մասերն, որ հին Բիւզանդիոնի սահմանադրուիքը կը նշանակեն, և կը բարձրանայ վեհագոյն Դուռը, ուստի կը մտնուի մեծ վեհիւրին և արտաքին գործոց պալատն էին պալատը. թաղ ահեղ և լուռ մուռ, յորում թուի ժողովեալ ամենայն տիրութիւն բախտից պետութեանն։ Այս հովտէն կ'ըլլեցուի երկրորդ բլրոյն վերայ, ուր կ'ամբաստնայ մարմարիտէն մզկիթն Նուրի-Օսմանիէ, լոյս Օսմանայ, և կոստանդիանոսի այրած սինն, որ պղնձեղէն Ապոլոն մը կը կրէր՝ մեծ ինքնակալին զլիւղին հանդերձ, և հին հրապարակին ճիշդ հէջտեղն էր, կա՛մարենք և արձաններէ շրջապատած։ Այս բլրէն անդին վաճառանոցներու հովիտը կը բացուի, որ Պայագիտի մըզկիթէն կ'երթայ մինչև Սուլթան վալիտէի մզկիթն, և կը բովանդակէ անհուն յարկածածուկ ճամբաներու լաւ բիւրիւններ մը, լի ժողովրդով և շառաչմամբ, ուսկից կ'ըլլեցուի միազնեալ աչքերով և ընդարմացած ականջներով՝ երրորդ բլրոյն վերայ, որ կ'իջնէ միանգամայն Մարմարա ծովուն և Ոսկեղջեր վերայ, հսկայակերպ կը բարձրանայ Սիւ-

լէյմանի մըլիթը, Սուլթը Սոփիայի նախանձորդը, ցնծոքիւն և փառք Ստամբուլի, ինչպէս կ'ըսեն տաճիկ բանաստեղծը, և պատերազմի Պաշտօնէին հրաշակերտ աշտարակն, որ կոստանդինոսեանց հին պալատներուն առեւտակացը վերայ կը կանգնի, ժամանակ մը աշխարհակալ Մէհմէտէն բնակեալ, յետոյ պառաւած սուլթան բամբաշնց համար պալատի փոխուած: Երրորդ և չորրորդ բլրոց մէջ կը տարածուի օդեղէն կամիլի մը պէս վաղնետոտ կայսեր ահագին յիմուղն, երկու կարգ ամենաթեթեւ կամարներէ յորինած, կանանցով զարդարեալ, որ բնակաւտ տանց հովտին վերայ պսակաձև կը կախուի: Կ'անցնիս ջրմուկին տակէն, չորրորդ բլրոյն վերայ կ'ելլաս: Հօս՝ Սուլթը Առաքելոց անուանի եկեղեցւոյն փլատակաց վերայ, 'ի Հեղինէ կայսրուհոյ հիմնեալ և վերանորոգեալ 'ի Թէոդորայէ, 'ի ամբառնայ Բ Մէհմէտի մըլիթը, բոլորեալ 'ի դպրոցաց, յանկեյանոցաց և 'ի կայնինց կարաւանաց. մըլիթին քով գերեաց վաճառանոցը, Մէհմէտի բաղանիքն և Մարկիանոսի կրանիտեայ սիւնն, որ դեռ կը կրէ իր կճեայ կոթողը կայսերական արժիւններով պըճնեալ. և սեան քով այն տեղն՝ ուր էր Աթ մէյտան հրապարակն, յորում Եէնիչերիներուն հուշակաւոր կոտորածը կատարուեցաւ: Կ'ընդմիջես ուրիշ հովիտ մը, ուրիշ քաղաքով մը ժամկուած, և կ'ելլաս հինգերորդ բլրոյն վերայ, յորում Մէլիմի մըլիթը կանգնած է, մօտ Սրբոյն Պետրոսի հին ջրհորոյն՝ 'ի պարտէզ փոխեալ: Վարը՝ Ոսկեղջեր երկայնութեան վերայ՝ կը տարածուի Ֆէնէր, յոյն թաղ, աթոռ պատրիարքի, ուր հին Բիւզանդիոնն ապաստաներ է, Պալէոլոգեանց և Կոմնենոսեանց սերնդոց հետ, և ուր 1821^ն սարսափելի արիւնահեղութիւնքն տեղի ունեցան: Կ'իջնաս հինգերորդ հովտի մը մէջ, կ'ելլաս վեցերորդ բլրոյն վերայ: Հօս՝ կաս արդէն այն հողոյն վերայ զոր կը գրաւէին կոստանդինոսի քառասուն հազար Գոթացւոց ութ գունդերն, առաջին որ

մոց ջրմանակէն դուրս, որոնք միայն չորրորդ բլուրը կը բովանդակէին, և ճիշդ եօթներորդ գնդին գրաւած տեղն, որ տեղւոյն Հեպտոմոն անունը թողեր է: Վեցերորդ բլրոյն վերայ կոստանդին Պերփեռուժենի պալատան պատերը կը մնան, ուր ինքնակալք կը պսակուէին, հիմակ 'ի Տաճկաց Դէքիր Սարայ կուլած, պալատ իշխանաց: Բլրոյն ոտքը՝ Պալադ, կոստանդնուպոլսոյ հրէական բնակարանը, թաղ աղտեղի, որ կ'երկընայ եղջեր ափանց վերայ մինչև քաղաքին պարիսպներն, և Պալադէն առդին, Պալկերնի հին արուարձանն, երբեմն ոսկեձեղուն պճնազարդեալ պալատներով, սիրելագոյն բնակարան ինքնակալաց, նշանաւոր Պուքերիա կայսրուհոյն մեծ եկեղեցեան և տեղի սըրբոց նշխարաց. այժմիկ լի աւերակք և տիրութեամբ: Ի Պալկերնեայ կը սկսին ատամնաձև պարիսպներն՝ որ Ոսկեղջիւրէն մինչև Մարմարա ծովը կ'ընթանան, գրաւելով եօթներորդ բլուրն, ուր էր եզանց հրապարակն, և դեռ կայ Արկադիոսի սեան պատուանդանը: Ստամբուլի ամենէն արեւելեան և ամենէն մեծ բլուրն, որուն մէջէն և մէկալ վեցերուն՝ կը վազէ Լիւզոս գետակն, որ կը մտնայ 'ի քաղաք՝ Գարիբիոյ գրան մօտ, և կ'երթայ ծովը թափելու Թէոդոսի հին նաւահանգստին մօտիկ: Պալկերնեայ պարիսպներէն դեռ կը տեսնուի Օրդաքսիլը արուարձանն, որ կ'իջնայ դիւրիշանելի կերպով դէպ 'ի նաւակայս, պսակեալ պարտէզներով: Օրդաքսիլէրէն անդին՝ Ելիւպի արուարձանն, Օսմանեանց սուլթ երկիրն, իր նաղելի մըլիթովն, և իր լայնատարած գերեզմանատունն հովանաւորեալ նոճիներու անտառէ մը և սպիտակացեալ 'ի փառաւոր շիրմաց և 'ի տապանաց. Էլիւպին ետև՝ հին զինուորական բանակին բարձրատափն, ուր լէգէոններն նոր ինքնակալքը վահանաց վերայ կը վերցընէին. և բարձրատափէն անդին՝ ուրիշ գեղեր, որոնց կենդանի գոյներն ընդ ալօտ կը ծիծաղին անտառաց կանանցութեան մէջ՝ Ոսկեղջեր վերջին ջր-

երէն թրջած: Ահաւասիկ Ստամպոլ,
Հրաշալի է: Բայց սիրա կը զարհու-
րի՝ մտածելով որ այս անեզր ասիական
գեղը կը տարածուի այն երկրորդ Հոռվ-
մայ, այն յիտալիոյ, ի ցունաստանէ,
յեգիպտոսէ, ի փոքր Ասիոյ յափշտա-
կեալ անբաւ թանգարանին դանձուցն
աւերակաց վերայ, որուն միայն յիշա-
տակն, ինչպէս աստուածային երազ
մը, կը շլացնէ մարդուս միտքը: Ուր
են մեծամեծ կամարակապ սրահն որ
կ'ընդմիջէին զքաղաքը ծովէն մինչև ի
պարիսպս, ոսկեճաճանչ գմբէթն, ձի-
աւոր վիթխարի անդրիքն՝ որ կը բար-
ձրանային տիտանեան կամարասեանց
վերայ՝ ամբիթէատրոնաց և բաղանեաց
առջև, պղնձեայ սփինգսներն՝ պորփի-
րի պատուանդանաց վերայ նստած,
տաճարներն և պալատներն որ կը կան-
գնէին կրանիտեայ ճակատներն՝ օդային
ժողովրդեան մը կճեայ աստուածոց և
արծաթեայ ինքնակալաց մէջ: Ամենայն
ինչ աներեւոյթ եղած է և այլակերպ:
Պղնձէ հեծեալ արձաններն՝ ձուլեցան ի
թնդանօթս. կոթողներուն պղնձագործ
պատեանքը՝ դրամի վերածած. կայսրու-
հետց շիրմներն փոխեալ ի յաղորհրա-
ս. Սրբուհւոյն Եփեսոյի եկեղեցին զինանոց
մ'է, Էդստանդիանոսի ջրհորն արուես-
տանոց մը, Արկադիոսի սեան խարիս-
խը պայտառի կրպակ մը, Իբսոստրո-
մոն ձիոց վաճառատեղի մը. բաղեղն և
փլատակներն արքունեաց հիմունքը կը
ծածկեն, ամբիթէատրոնաց դետներն
վերայ գերեզմանատանց խոտը կ'ածի,
և քիչ արձանագրութիւններն ի հրդե-
հից կիր դարձած և ասպատակողաց
սուրբերէն ծայրատած՝ կը յիշեցնեն որ
երբեմն այն բլրոց վերայ Արևելեան ինք-
նակալութեան հրաշակերտ մայրաքա-
ղաքն եղաւ: Այս դժնդակ աւերակաց
վերայ կը բազմի Ստամպոլ, ինչպէս
սուլթանի հարճ մը գերեզմանի մը վե-
րայ, իր ժամուն սպասելով:

Հետեւալ հատուածն « Ի Պանդոկին », գրե-
թէ կիսով չափ կրճատած ենք:

Ի Պանդոկին

Եւ այժմ ընթերցողք զան ինծի հետ
'ի պանդոկ, քիչ մը շունչ առնելու հա-
մար:

Մինչև հիմայ նկարագրածներէս մեծ
մաս մը՝ ես և իմ բարեկամս Նոյն հաս-
նելուն օրը տեսանք. թող երևակայէ,
ով որ կը կարդայ, ինչ գլուխ ունեցած
պիտի ըլլանք՝ երբոր երեկոյեան դէմ ի
պանդոկ դարձանք: Ճամբուն վերայ
խօսք մը չըսուեցաւ, և հազիւ թէ սե-
նեակը մտանք, բազմոցին վերայ յօդ-
նած ինկանք իրարու երես նայելով և
երկուքնիս ալ մէկտեղ հարցնելով.

— Գեգի թիչ կ'երևայ:

— Ինչ կ'ըսես:

— Եւ մտածել որ ես հօս եկեր եմ
նկարելու համար:

— Եւ ես գրելու համար:

Եւ յիշաւ, այն իրիկունն, և քանի
մը օր վերջն ալ, եթէ Ապրիլ—Ապրի-
լի վեհափառութիւնն ընծայէր ի վարձ
փոքր Ասիոյ գաւառ մը, ես չէի յաղ-
ղեր երկու տող գրել իրեն Տէրութեան
մայրաքաղաքին վերայ, այնչափ ճշմա-
րիտ է՝ որ մեծամեծ բաները նկարա-
գրելու համար պէտք է հեռու ըլլալ, և
աղէկ յիշելու համար, քիչ մը մոռնալ
զանոնք: Եւ վերջն ինչպէս կրնայի գրել
անեկի մը մէջ՝ ուսկից կը տեսնուէր
վոսփորոնն, իւսկիւտարն և Ոլիմպոսի
գագաթն: Նոյն իսկ պանդոկը տեսա-
րան մ'էր: Բոլոր օրուան ժամերուն, ի
սանդղոց և ի սրահից, կ'երթար և կու-
գար ամենայն երկրէ մարդ: Միաբան
սեղանակցութեան ատեն ամեն օրքան
ազգէ մարդիկ կը նստէին: Ճաշելու
ժամանակս, չէի կրնար մաքէս հանել
թէ իտալական տէրութեան գործակալ
մ'եմ, և թէ պէտք եմ խօսիլ պողոյն
ատեն խառնագգային մեծ խնդրոյ մը
վերայ: Կային հօն տիկնանց վարդապոյն
երեսներ, արուեստաւորաց գիսախօհ
գլուխներ, վրանին ստակ կոխելու բախ-
տախդիրներու կերպարաններ, բիւ-
զանդական կուսանաց գլուխներ, որոնց
ուրիշ բան չէր պակսեր բայց ոսկեղէն

պատճառով . այլանդակի և դժնեայ դէմքեր .
և ամեն օր կը փոփոխէին : Պաղոյն ժա-
մանակն , երբոր ամենքը կը խօսէին ,
կարծես որ Բաբելոնի աշտարակին մէջ
ես : Ինչուան առաջին օրէն՝ կոստանդ-
նուպօլսոյ սիրով խենթ քանի մը Ռուս-
ներ ճանչցայ : Ամեն իրիկուն հօն կը
գտնուէինք , քաղաքին վերջին ծայրերէն
դարձած , և իւրաքանչիւրը պատմելու
ճամբորդութիւն մ'ունէր : Մէկը Սէ-
րապէրի աշտարակին ծայրն ելեր էր ,
մէկն Էյիւպի գերեզմանատանն այցե-
լութիւն ըրեր էր , մէկը կու գար յիւս-
կիւտարէն , մէկն ուղեգնացութիւն մ'ը-
րեր էր 'ի վուսփոր . խօսակցութիւնը
գունագոյն և լուսալիր նկարագիրներով
բոլոր հիւսած էր . և երբոր խօսքը կը
պակսէր , Արշիպեղագոսի քաղցր և ա-
նուշահոտ զինիններն ազգարարի պաշ-
տօն կը կատարէին : Կային նաև իմ քա-
ղաքակիցներէս քանի մը անձինք , ար-
ժաթի տէր մեծղի մարդիկ , որ զիս սաա-
տիկ զայրացուցին , վասն զի ապուրէն
մինչև պտուղն ուրիշ բան չըրին՝ բայց
կոստանդնուպօլսոյ վերայ չար խօսիլ-
թէ սալայատակ չկայ , և թէ մթին են
թատրոններն , և թէ չի զիտցուիր ինչ-
պէս պէտք է անցունել իրիկուններն :
Ասոնցմէ մէկն Դանուբին վերայ ճամ-
բորդութիւն ըրեր էր , իրեն հարցուցի
թէ այն մեծ գետն հաճոյ երեցաւ իրեն :
Պատասխան տուաւ ինծի թէ այխարհ-
քիս մէկ կողմն ալ թառափը չեն եփեր
այնպէս՝ ինչպէս աւստրիական արքունի
և կայսերական լնկերութեան չոգենա-
ւուց վերայ : Բայց այս աշխարհաբնակ
քաղաքաց պանդոկներուն անձինքն
որ առջևդ կ'ելլան : Պէտք է հօն եղած
ըլլալ հաւատարու համար : Կար հուն-
գարացի երիտասարդ մը , գրեթէ երես-
նամեան , բարձրահասակ , կորովի , եր-
կու սատանայական աշուրներով և ջեր-
մնական խօսակցութեամբ մը , որ Բա-
բելոն հարուստ տանտիրոջ մը քարտու-
ղարութիւն ընելէն ետքը , գնացեր էր
յԱլճերի զուաֆ զինուորաց գնդին մէջ
գրուելու . յետոյ փախեր էր 'ի Մարոք ,
ապա դարձեր էր յԵւրոպայ և գնացեր

էր յԱլյա՝ սալայի աստիճանն ուղիւ ,
Ալկիկնեցուց դէմ երթալու պատերազ-
մելու համար . Ալյայէն չընդունուելով ,
Տանկաց զօրաց մէջ ուղեր էր մտնալ .
բայց կոստանդնուպօլիս գալու համար
վեննայէն անցնելու ժամանակ , հրա-
ցանի գնտակ մը վիզն առած էր , կնոջ
մը համար մենամարտութեան մը մէջ ,
և սպին կը ցուցնէր . կոստանդնուպօ-
սէն ալ մերժուելով , — ինչ պիտի ը-
նեմ — կ'ըսէր — je suis l'enfant de l'a-
venture (ծնունդ եմ բախտին) . պէտք
է որ ես զարնուիմ . արդէն գտայ ով որ
զիս պիտի տանի 'ի Հնդկիս , — և նաւ
մտնալու տոմսակը կը ցուցնէր — .
անգղիացի զինուոր կ'ըլլամ . ներսս բան
մը կայ գործելու . ուրիշ բան չեմ փնտը-
ռեր բայց զարնուիլ . ինչ փոյթ է ինծի
մեռնիլն . այնպէս ալ թողիս մէկն աւ-
րեր եմ — Ուրիշ արտառոց մարդ մ'էր
զաղղիացի մը , որուն կեանքն ուրիշ բան
չէր երևնար բայց նամակատանց հետ
յաւիտենական կռիւ մը . աւստրիացի ,
զաղղիացի և անգղիացի նամակատանց
հետ առկախեալ խնդիր մ'ունէր , բու-
ղաբագիրներ կը զրկէր Նայոն Ֆրոյն Բրէ-
ւին . հեռագրական տարադէպ խօսքեր
կը ճառատէր աշխարհիս նամակատան
վերաբերեալ ամեն կայանից հետ , ա-
մեն օր նամակատան պատուհանի մը
վերայ խօսակցութիւն մ'ունէր , ժա-
մանակին նամակ չէր ընդուներ , նա-
մակ մը չէր դրեր որ հասներ ուր որ
զրկած է , և սեղանին վերայ կը պատմէր
բոլոր իր գգազղութիւններն և բոլոր
իր կռիւներն , եզրակացուցանելով միշտ՝
ապահովցնելով զմեզ որ նամակատունն
իր կեանքը պիտի կարճեցունէր : Եր
յիշեմ նաև այսահարի դէմքով յոյն
տիկին մը , այլանդակ կերպով հագած ,
և միշտ միայնակ , և որ ամեն իրիկուն
կ'ելլար սեղանէն կերակուրին կէսին ,
և այնակին վերայ կախարդական նշան
մ'ընելէն ետքը՝ կ'երթար , որուն նշա-
նակութիւնը մէկը չյայտնեցաւ երբեք
զիտնալու : Ուրիշ ինչ բան կը յիշեմ .
ուրիշ հարիւրաւորներ , եթէ մտա-
մէի : Միգական լապտեր մ'էր : Կը

գուարճանայինք, իմ բարեկամս և ես, շողենաու մը հասնելու օրն, տեսնելով փողոցի կողմի գոնէն մարդկանց մտնելն. ամենքը վատտակեալ, ապշած, ումանք դեռ ևս յուզեալ առաջին մտից տեսարանէն. գէ՛վբեր՝ որ կ'ըսէին. — Այս Բնչ աշխարհք է. ո՛ւր եկանք ինչպիսի. — Օր մը՝ դեռ նոր հասած երիտասարդ մը մտաւ, որ վերջապէս 'ի կոստանդնուպօլիս ըլլալուն ուրախութենէն խնլագարած կ'երևար, իր մանկութեան երազն, և երկու ձեռքերովն իր հօրը մատերը կը սեղմէր. և իր հայրը խանդաղատեալ ձայնով կ'ըսէր իրեն. — Je suis heureux de te voir heureux, mon cher enfant (Երջանիկ եմ՝ զքեզ երջանիկ տեսնելուս, սիրելի որդեակ իմ)։ — Յետոյ տաք ժամերն կ'անցընէինք պատուհանն՝ Օրիորդի Աշտարակը (Գըզ գուլէսի) նշկատելու, որ իւսկիւտարի դիմաց, վոսփորի ամայի ժայռի մը վերայ, ձևան պէս սպիտակափայլ կը բարձրանայ. և մինչդեռ մտքը կը թափառէինք, դիմացը՝ տանը պատուհանէ մը, ամէն օր նոյն ժամուն՝ հինգ տարուան տղայ մը մատովը գմեղ ծաղր կ'ընէր։ Ամենայն ինչ հետաքրքրական էր այն պանդուխին մէջ։ . . .

Կոստանդնուպօլիս

Բայց դառնանք 'ի կոստանդնուպօլիս, և հօն թափառինք ինչպէս թրուշուններն յերկինս, Հօս ամենայն հաճոյք կրնաս կատարել։ Կրնաս վառել ծխախոտ դիւրոպա և երթալ թօթափել միխիրն յԱօիա։ Առաւօտն ելլելու ժամանակնիս կրնանք հարցընել մենք մեզի. — Այսօր աշխարհքիս ո՞ր կողմը պիտի տեսնամ։ — Կրնաս ընտրել երկու աշխարհաց մէջ և երկու ծովուց մէջ։ Ամեն հրապարակի մէջ մեզի պատրաստ կան թամբեալ երիվարներ, ամեն ծոցի մէջ առաքաաստաւոր նաւակներ, հարիւր նաւամատոյց տեղեր՝ շողենաւեր. մալոյկն որ կը սահի, դալիքան որ կը թռչի, և կիկերոններու բանակ մը որ եւրոպայի ամեն լեզու.

ները կը խօսին։ Կ'ուզես լսել իտալական կատակերգութիւնն. տեսնել տէր վիշնեռուն պարելը. լսել տաճկական միմասին՝ Գարակէօզին խեղկատակութիւնքը. մտիկ ընել Բարիզու փոքր թատրոններուն խենէշ երգերը. ներկայ ըլլալ գնչուներուն մարմնակրթական հանդիսիցը. պատմել տալ հազներգութի մը արարական վէպ մը. երթալ յունական թատրոնը. լսել իմամի մը քարոզը. տեսնել Սուլթանին անցնելը։ Խնդրէ և հարցուր։ Բոլոր ազգերն քեզի ծառայելու պատրաստ են. հայն ժօրուքդ ածիլելու, հրեայն կօշիկներդ փայլեցնելու, տաճիկն նաւակը տանելու գրեզ, սեր բաղանեաց մէջ զքեզ չփելու. յոյնը սուրճ տալու համար, անգլիցն ալ միանգամայն խաբելու գրեզ։ Քաշելու ժամանակդ, ծարուղ անցընելու համար, Ուիպուսի ձիւնով պաղպաղակներ կը գտնաս. թէ որ շատակեր ես, կրնաս Նեղոսի ջրէն խմել, ինչպէս Սուլթանը. թէ որ ստամբուդ տկար է, եփրատայ ջուրն. թէ որ չլային ես, Դաշուրի ջուրն։ Կրնաս Արաբացւոյն պէս անապատին մէջ կերակուր ուտել կամ որովայնապարարի մը պէս յոսկեղէն տուն (Maison dorée), Դաղերեւու համար, գերեզմանատեղիքն ունիս. ապշելու համար, Սուլթան վալիտէի կամօրջն. երազելու համար, Վոսփորն. կիրակին անցընելու համար, իշխանաց Արշիպեղադոսն. փոքր Ասիա տեսնելու համար, Պուլկուրլու լեռն. Ռսկեղլիւրը տեսնելու համար, Կալագայի աշտարակն. ամեն բան տեսնելու համար, Սէրապէրի աշտարակը։ Բայց աւելի նորանշանքալուք մ'է քան թէ գեղեցիկ։ Այն բաներն որ մեր մտքին մէջ չեն ներկայանար, հօն մէկտեղ մեր աչքին կը ներկայանան։ Իւսկիւտարէն կը մեկնի կառաւանն 'ի Մէքքա և կը մեկնի շողեն. կառքն ուղղեալ 'ի Պրուսա, 'ի վաղեմի մայրաքաղաքը. հին պալատան խորհրդաւոր որմնաց մէջ էն կ'անցնի երկաթուղին որ 'ի Սօֆիա կ'երթայ. տաճիկ գինուորք կ'առաջնորդեն կաթոլիկ քահանային որ Սուրբ Խորհուրդը կը տա.

նի. Ժողովուրդը տօն կը կատարէ գերեզմանատանց մէջ. կեանքը, մահը, հաճոյքը, ամենայն ինչ կը կապուի կը շփոթուի: Կայ հօն Լոնտրայի շարժմանքն և արևելեան պարապորդուիմեան քնափութիւնն, անհուն հասարակաց կեանք մը և առանձնական կենաց մէջ անխտիրանցելի խորհուրդ մը. բացարձակ վարչութիւն մը և անսահման ազատութիւն մը: Առաջին օրերն բան մը չես գտներ. կարծես որ ժամէ 'ի ժամ կամ այն խառնակութիւնը պիտի դադրի կամ խռովութիւն մը պիտի ելլէ. ամեն իրիկուն, երբոր տուն կը դառնաս, կարծես թէ ճամբորդութենէ մը կը դառնաս. ամեն առաւօտ մէկուն կը հարցնես. — Բայց յիշաւի հօս մօտ է Ստամբուլ: — Չես գիտեր ուր երթաս դարնես զընտղ, մէկ տպաւորութիւն մը՝ մէկայը կ'եղծանէ, իղձերը կը խռնին, ժամանակը կը փախչի. և կըսես կենալ հօն բոլոր կեանքովդ, կ'ուզես մեկնիլ երկրորդ օրն: Եւ երբ արդեօք պիտի նկարագրեմ այս թոհ և բոհը: Այժմ իսկ փորձութիւնս կու գայ ամեն գրքերս և ամեն գրասեղանիս վերայ ունեցած թղթերս ծրար մը շինել, և ամենայն ինչ պատուհանէն դուրս նետել:

Կալադա և իր աշտարակն

Բարեկամս և ես հազիւ ինքզինքնիս գտանդ հասնենէս չորս օր վերջը: Առաւօտը կանուխ կամօյին վերայ էինք, գեռ տարտամ օրուան մէջ ընկիւններու տուս վերայ, երբոր եունը առաջարկեց ինծի՝ որ առաջին մեծ շրջագայութիւն մ'ընեմք, որոշեալ չափով մը, անդորր հոգով, զննելու և սորվելու համար: — Ընթանա՛նք, — ըսաւ ինծի, — Ոսկեղէնը բոլոր հիւսիսային ափունքը, թէպէտ և հարկ ըլլայ մինչև 'ի գլխեր քալել: Տաճկական պանդուխտ մը մէջ նախաճաշն ընեմք, սօսույ մը ստուերին ներքև գաղարինք, և նաւակով դառնանք: — Առաջարկութիւնս ընդունեցայ. ծխախոտ և զբամ հոգայեմք,

և քաղաքին տեղացոյց տախտակին աչք մը տալէն ետքը, դէպ 'ի Կալադա ճամբայ ելանք:

Ընթերցողը որ կ'ուզէ աղէկ ճանչնալ կոստանդնուպոլիսը՝ մեզի հետ ընկերելու գիջանի:

Կը հասնինք 'ի Կալադա: Մեր ուղեւորութիւնն աստի պէտք է սկսի: Կալադա բլրոյ մը վերայ դրուած է, որ ընդ Ոսկեղջիւրն և ընդ Վոսփոր՝ հրուանդան կը ձևացնէ, ուր հին Բիւզանդացոց մեծ գերեզմանատունն էր: Կոստանդնուպոլսոյ ներքին քաղաքն է: Գրեթէ բոլորն անձուկ և ծամածուռ ճամբաներ են, երկու կողմերին ունենալով պանդուխտներ, քաղաքագործաց՝ վարսավիրայից՝ մսավաճառաց խանութներ, յոյն և հայ սրճարաններ, վաճառականաց պաշտօնատեղիք, արուեստանոցք, հիւրք. ամենայն ինչ տխրեալք, գիծին, սղմալից, թանձրամած, Լոնտրայի տուրին թաղից պէս: Խուռն և բազմազգաղ մարմն մը ճամբաներէն կ'երթայ և կու գայ, անընդհատ բացուելով բռնակրաց, կառաց, իշոց, համաշխարհիկ կառաց անցք տալու համար: Գրեթէ բոլոր կոստանդնուպոլսոյ առևտուրն այս արուարձանէն կ'անցնի: Հօս՝ վաճառականաց Ժողովետը, Մաքսատունը, աւստրիական Լոյտին՝ դաղդիական Մէսսածըրիին պաշտօնատեղիքն. Եկեղեցիք, մենաստանք, անկեղանոցք, մթեղանոցք: Ստորերկեայ երկաթուղի մը Կալադա և Բերա կը միացնէ: Թէ որ ճամբաներուն վերայ փակեցներ և ֆէստեր չտեսնուէին, չէր կարծուր Արեւելքի մէջ ըլլալ: Ամեն կողմանէ գաղղիացի, իտալացի և ճենովացի բարբառք կը լսուին: Հօս ճենովացիք զրեթէ իրենց յատուկ տանք մէջ են, և գեռ քիչ մ'իրենք իրենց տէրերու կերպարանք կու տան, ինչպէս երբոր ուզած ժամանակին նաւահանագիտոր կը փակէին, և ինքնակալաց սպառնալեաց՝ թառնաթոխով կը պատասխանէին: Բայց իրենց զօրութենէն մնացած չեն ուրիշ հոյակապ շինուածք՝ բայց եթէ քանի

մը ստուար մայթերէ և խոշոր կամար-
ներէ վերամբարձ հինօրեայ տուներ,
և վաղեմի շէնքն՝ ուր Ոստիկանը կը
նստէր: Հին կալազան գրեթէ բո-
լորովին անհետացած է: Հազարաւոր
տնակներ հիմնայատակ ելած են եր-
կու երկայն ճանապարհաց տեղ տալու
համար. որոնցմէ մէկը՝ դէպ ՚ի Բերա
բլուրն ՚ի վեր կ'ենլէ, և միւսը՝ Կալազա-
յի մէկ ծայրէն մէկալը՝ ծովուն ավան-
ցը զուգահեռական կ'ընթանայ: Ասկից
բարեկամն և ես յառաջ խաղաղինք,
ամեն վայրկեան խանութները փախչե-
լով՝ թողու անցնելու համար մեծ համ-
ալխարհիկ կառքեր, որոնց առջևէն
կ'երթային անշապիկ Տաճիկներ, որ
զաւազանի հարուածներով ճամպայ կը
բանային: Ամեն քայլին աղաղակ մ'ա-
կանջներուս մէջ կը հնչէր: Տաճիկ բեռ-
նակիրը կը գոչէր. — Սաքըն հաւ. —
հայ ջրկիրն. — Վարմը սու իշէն. —
յոյն յրկիրն. — Գրի'օ ներօ. — Թուրք
իշափարը. — Պոռթալաւ. — քաղցրա-
ւենեաց վաճառողը. — Շէրպէ'տ. —
լրագրոց վաճառողը. — Նէոլոդաւ. —
եւրոպացի կառավարը. — Կոռարտաւ,
կոռարտաւ: Տաւը վայրկեան քողեղէն
վերջը՝ խլացած էինք: Որոշեալ տեղ մը,
զարմանալեզօ անդարդարձանք՝ որ ճամ-
բան սալայատակ շինուած չէր, և սա-
լայատակը նոր վերցուած կ'երեւար: Կե-
ցանք նայելու, ուղեւով պատճառը գու-
շակիլ: Խաղաղացի կրպակաւոր մը հետա-
քըքրութիւննիս լցուց: Այն ճամբան
Սուլթանին պալատներուն կը տանի: Փիչ
աճիս առաջ՝ կոյսաբական ուղեգնացու-
թիւնն ատեն, վեհափառ Ապտիւր-Աղլիդի
երիվարը սահեր ինկեր էր, և բարի Սուլ-
դանը զայրացած՝ հրամայեր էր որ ան-
միջապէս սալայատակը վերցուի ինկած
տեղէն մինչև իր պալատն: Այս յիշա-
տակաց տեղը՝ մեր շրջադայութեան
արեւելեան սահմանն որոշեցինք, և ու-
սերնիս Վափոր դարձուներով, շատ
մը խաւարտին և աղտեղի նրբափողոց-
ներէ ուղղեցանք դէպ ՚ի Կալազա: Կա-
լազա քաղաքը բացուած հովահարի մը
ձեն ունի, և բլրոյն գագաթը կանգնուած

աշտարակն իր առանցքը կը ներկայա-
ցնէ: Բլուրչի աշտարակ մ'է, բար-
ձրակառոյց, թխագոյն, որ կոնանձե
ծայրով մը կը լմնայ, պղնձէ տանիքով
մը ձևացած, որուն ներքեւ կը պատէ
ապակեղէն լայն պատուհանաց շրջան
մը, տեսակ մը ծածկուած և թափանցիկ
տամալիք, ուր գիշեր և ցորեկ պահա-
պան զինուոր մը կը հսկէ՝ հաշտին քա-
ղաքին մէջ երեցած հրգեհի առաջին
նշանը տալու համար: Ճենովացուց
Կալազան մինչև այս աշտարակը կը
հասնէր, և աշտարակը՝ Կալազա Բերա-
յէն բաժնող գծին որմնը վերայ ճիշդ
կը բարձրանայ. որմնից՝ որոնց հետքը
այլ չերևար: Նա և ոչ աշտարակը Քրիս-
տոսի հին աշտարակն է, կանգնեալ ՚ի
պատիւ պատերազմելով անկելոց ճե-
նովացուց, վասն զի Սուլթան Մահմուտ
Բ վերստին շինեց զայն, և արդէն Գ. Սէ-
լիմէն վերանորոգուած էր. բայց և այն.
պէս միշտ ճենովայի փառք պսակեալ
յիշատակարան մ'է, և Խալալացի մը չի
կրնար նկատել զայն, առանց պերճանք
մը մտածելու այն բուռ մը վաճառակե-
նաց, նաւաստեաց և զինուորաց վերայ,
խրոխտաբար յանդգունք և դիւցազնա-
բար անդրգունիք, որ դարերով հասա-
րակապետութեան մօր դրօշն հօն վերը
պարզեալ պահեցին, Արեւելեան ինք-
նակալաց հետ հաւասար ընդ հաւասա-
րի վարուելով: Հաղիւ աշտարակն ան-
ցանք, մուսուլմանաց գերեզմանատե-
ղոյ մը մէջ գտնուեցանք:

Կալազայի Գերեզմանատունն: —
Կալազայի գերեզմանատուն կոչուածն
էր այն. նոճեաց մեծ անտառ մը, որ Բե-
րայի գլխոյն գագաթէն կ'իջնայ զառ ՚ի
վայրով մինչև յիսկեղջիւր, ստուերա-
ցնելով քարէ և կիճէ սիւնակներ, ամեն
դիրք ծածկ, և խառնիխառն ցրուած
զառ ՚ի թափէն վար: Այս սիւնակներէն
ոմանք կտր փակեղան ձևով վերջացած
են, և գունոց և արձանագրութեանց
հետքեր կը պահեն. ուրիշները ծայրա-
սուր վերջացած են. շատերը տապա-
լեալ. ոմանք ծայրատաճ, փակեղը բո-

լորովին 'ի բաց բարձեալ, և կը կար-
ծուի որ Եջեիշէրեաց ըլլան, զոր Սուլ-
դան Մուհամադ իրենց մահուընէն ետքն
ալ ուզեց անպատուել : փոսերուն մե-
ծագոյն մասը նշանակուած է հատուա-
ծակողման ձևով հողոյ բարձրութեամբ
մը, և երկու ծայրերը հարստած կրկին
քարերով որոնց վերայ, րստ մուսուլմա-
նեան աւելորդապաշտութեան, պիտի
նստին Նէքիր և Մուհքիր երկու հրեշ-
տախքն մեռելոյն հոգին դատելու հա-
մար : Կը տեսնուին աստ և անդ պզտիկ
հողաբլուրներ՝ որմով մը կամ վանդա-
կապատով մը շրջափակած, որոնց մէջ
սիւնակ մը կը բարձրանայ՝ 'ի վերոյ
ունենալով ստուար փակեղ մը, և շուր-
ջանակի ուրիշ փղբարգոյն սիւնակներ .
փաշայ մ'է կամ մեծ տանուտէր մը,
իրեն կանանց և որդեղը մէջ թաղուած :
Հազարաւոր կէտերու վերայ՝ անտա-
ռին մէկ ծայրէն միւսը՝ կը սողան և
զիրար կը կտրեն փղբ Գամբաներ . քա-
նի մը Տաճիկք՝ հովանոյ տակ նստած
կը ծխեն ծխափողը . տղայք ոմանք կը
վազեն և կը ցատկըտեն գերեզմանաց
մէջ . քանի մը կով կ'արածին . հարիւ-
րաւոր տատրակներ նոճեաց ռստոց մէջ
վուվու կ'ընեն . կ'անցնին քողաձիգ կա-
նանց խումբեր . և նոճիէ նոճի, Ստամ-
պուլի մինարէներէն սպիտակերանգ գը-
ծուած Ոսկեղջեր կապոյտը՝ վարը ծայ-
րը կը փայլի :

Բերա : — Կ'ելլենք գերեզմանատու-
նէն, կ'անցնինք դարձեալ Կալադայի
աշտարակին ստորոտէն և կը մանանք
Բերայի գլխաւոր ճամբան Բերա՝ ծովէն
հարիւր մէգը բարձր է, հովասուն և
զուարթ է, և Ոսկեղջեր և Վոսփորի կը
նայի : Էւրոպական գաղթականութեան
Ուլստէնան է . վայելչութեան և զուար-
ճութեանց քաղաք : Ուղին յոր կ'ընթա-
նանք՝ ունի յերկոցունց կողմանց ան-
գղիացի և գաղղիացի պանդոկներ, աղ-
նուականայ սրճարաններ, փայլուն
կրպակներ, թատրոններ, Հիւպատո-
սարաններ, Ժողովարաններ, գեապանաց
պալատներ . որոնց մէջ հսկայածէ կ'ամ-

բառնայ ռուս գեապանատան քարաշէն
պալատն, որ ամրոցի մը պէս կ'իշխե
Բերայի, Կալադայի և Ֆրնտըզը ա-
րուարձանին՝ Վոսփորի ափանցը վերայ
դրուած : Հօս՝ Կալադայի ամբիսէն բո-
լորովին տարբեր ամբիս մը կը վիտայ :
Գրեթէ բոլորն ալ են դորակած և զը-
խարկներ և տիկնանց փետրաւոր և
ծաղկազարդ փղբ խոյրեր : Էն յոյն,
իտալացի, գաղղիացի պչողներ, մե-
ծամեծ նաւերու վաճառականք, պաշ-
տոնեայք գեապանութեանց, սպայք
օտարազգի նաւուց, գեապանաց կառ-
քեր, և ամենայն ազգէ երկղիմի կեր-
պարաններ : Տաճիկները կը կենան
վարսավերայից խանութներուն մոմե-
ղէն զուլանները դիտելու, տաճիկ կա-
նայք բերանարաց կանկ կ'առնեն՝ նո-
րաճեութեանց վաճառականաց ապա-
կեայ պատուհանաց առջև . եւրոպացիին
բարձրաձայն կը խօսի, ճամբուն մէջ
քրքիջ կը բառնայ և կատակ կ'ընէ .
թուրքը կը զգայ որ ուրիշին տունն է,
և կ'անցնի ոչ որպէս 'ի Ստամպուլ բարձր
գլխով : Յանկարծակի բարեկամս զիս
ետ դարձնել տուաւ որպէս զի Ստամ-
պուլ նայիմ . և յիրաւի այն կէտէն հե-
ռու կը տեսնուէր, կապուտակազոյն
քօղի մ'ետէն, Պալատան բլուրը,
Սուրբ Սոփիա և Սուլթան Ահմէտի մի-
նարէներն . ուրիշ աշխարհք մ'այն աշ-
խարհէն գուրս յորումէինք : Ուրիշ ան-
գամ մը են կեցուցի իմ ընկերս զարմա-
նալի սրճարան մը ցուցնելու համար .
լայն և երկայն խաւարչուտ սրահ մը,
որուն ծայրը, բացուած մեծ պատու-
հանէ մը, կը տեսնուէր հեռաւորու-
թենէ մը որ ահագին կ'երևար, իւսկիւ-
տար արեւէն լուսաւորուած :

Բերայի ճամբէն երբոր ելանք, ուրիշ
տաճկական գերեզմանատեղոյ մ'առ-
ջիւր գտնուեցանք, նոճեաց անտառէ մը
հովանաւորեալ, և շուրջանակի բարձր
պարսպով մը փակուած : Թէ որ վերջն
բաժն չըլլային՝ երբեք պիտի չգուշա-
կէինք այն նոր բարձրացուցած պատին
պատճառն, որ է մեռելոց հանգստեան

սուրբ անտառը զինուորական տարփա-
նաց բոյն մը դարձնենքին : Եւ յիրաւի,
երբ առաջ գնացիք, 'ի խալիլ փաշայէ
բարձրացեալ հրաձիգ զօրաց ահագին
զինուորանոցը գտանք . ուղղանկիւնի
ձեով հաստակաւոյց չէ՛ր մը, տաճկա-
կան վերանորոգութեան մաւրիտանա-
ցի ճարտարապետութեամբ, դռնով մը՝
որուն երկու կողմերը կան թեթեւ սիւ-
ներ և 'ի վերոյ կիսալուսինն և Մահմու-
տայ ոսկեղէն աստղն, 'ի դուռն ցցուեալ
ճեմելիք և ազգատոհմի կնքով և արա-
բական նկարներով զարդարեալ պա-
տուհաններ : Զինուորանոցին առջևէն
ջատտէ արահետ ճամբան կ'անցնի, որ
կերպի ուղւոյն շարունակութիւն մ'է .
ճամբէն անդին զինուց հրապարակ մը
կը տարածուի, և զինուց հրապարակէն
անդին ուրիշ արուարձաններ : Հօս,
ուր ընդհանրապէս լուր օրերը խորին
լուսթիւն մը կը տիրէ, կիրակի ի-
րիկունը կ'անցնի ժողովրդեան մը հե-
ղեղ և կառաց թափօր մը, բոլոր Բերայի
ապնուական ընկերութիւնը, որ կ'եր-
թայ ցրուելու պարտիզաց, գարեջրոյ
կրպակաց և սրճարանաց մէջ՝ Զինուո-
րանոցէն անդին : Այս սրճարաններէն
մէկուն մէջ առաջին անգամ կեցանք, 'ի
սրճարանն Գեղեցկաճաշուց (Bella
vista), տեղի ակմբի բերական աղնուա-
գոյն ընկերութեան, և ստուգիւ արժա-
նի իրեն անուանը . վասն զի իր ընդար-
ձակ պարտիզէն, որ պատշգամբի մը պէս
բլրոյն գագաթան վերայ դուռն կ'երկըն-
նայ, վարը՝ կը տեսնուի Ֆրետըզլը մու-
սուլմանական մեծ արուարձանը,՝ Վոս,
փոր ծածկեալ նաւուք, ասիական ա-
փուները՝ պարտէզներով և գեղերով սը-
փուտած, իսկիւտար իր ճերմակագոյն
մզկիթներովն, կանանչի, կապոյտի և
լուսոյ գեղեցկութիւն մը, որ երազ կը
կարծուի : Անկից տեղոհութեամբ ե-
լանք, և երկուքներնու ալ մուրաց-
կաններ ըլլալու պէս երեցաւ՝ երբոր
երկու թաս սուրճի համար՝ ասիական
վերայ նետեցինք ութ չնչին փողեր, այն
երկրաւոր արքայութեան տեսարանը
վայելելէն ետք :

Մեռելոց մէճ դաշտն : — Երբոր ե-
լանք 'ի Գեղեցկաճաշուցէն, մեռելոց
Մեծ Դաշտին մէջ գտնուեցանք, ուր բաց
յերբայեցւոց՝ զանազանեալ գերեզմա-
նատեղեաց մէջ ամեն կրօնից ժողովրդ-
դէ թաղուածք կան : Նոճեաց, ակասիա-
ներու, ժանտաթգեանաց թանձրախիտ
անտառ մ'է, յորում սպիտակադոյն կը
փայլին հազարաւոր գերեզմանական
քարեր, որ հեռուէն ահագին չէնքի
մը աւերակները կը կարծուին : Ծառէ
ծառ վափօրն և ասիական ասիուներ կը
տեսնուին : Լայն ճամբաներ կը սողան
չիրմաց մէջ, յորում Յոյներ և Հայեր կը
ճեմին : Քարանց վերայ սրունք սրունքի
վերայ դրած Տաճկներն նստած են,
զէպ 'ի վափօր նայելով : Մտուեր մը,
զովութիւն մը, խաղաղութիւն մը կայ,
որ առաջին անգամ մտնալուդ, հեշ-
տայի զգացում մը կ'ազդէ, ինչպէս երբ
ամառը մանաս աղօտաճաճանչ մեծ
մայր եկեղեցւոյ մը մէջ : Հայ գերեզմա-
նատանը մէջ կանկ առինք : Դամբա-
նական վէմ քարերը բոլոր մեծ և հար-
թարտակ են, հայկական լեզուին կա-
նոնաւոր և վայելուչ գրերով ծածկուած
արձանադրութեամբք, և գրեթէ ամե-
նուն վերայ պատկեր մը քանդակուած
է՝ որ մեռելոյն արուեստը կամ հաւատա-
քը կը ներկայացընէ : Մուրճեր, սղոց-
ներ, գրիչներ, արկղներ, քառամա-
նականք են . լուսնայափոխ կշիռքով
մը, քահանայն սաղաւարտով մը, վար-
սավիրայն կոնքով մը, վիրաբոյժը նըշ-
տրակով մը ներկայացուած են : Քարի
մը վերայ մարմնէն բաժնուած զլուխ
մը տեսանք, մարմինն արիւն կը կա-
թէր. սպաննուածի մը կամ զլխատուա-
ծի մը գերեզմանն էր : Հայ մը՝ խո-
տին վերայ տարածուած՝ երեսը դէպ 'ի
երկինք՝ հօն մօտիկ կը քնանար : Մը-
տանք առճակական գերեզմանատեղին :
Հօս ալ շարքով և ցիրուցան խմբով սիւ-
նակաց անբաւութիւն մը . ոմանք նկու-
րեալ և ոսկեգօծեալ զլուխներով . կա-
նանցը՝ բարձրաքանդակ զարդերու
խմբով մը վերջացած, որ ծաղիկներ կը
ներկայացընէին . շատերը թուփերով և

ծաղկեալ տունկերով պատած : Մինչդեռ կեցած էինք այս սիւնակներէն մէկը դիտելով, երկու Տաճիկ որ տղու մը ձեռքէն բռներ էին, անցան քովերէս, յիսուն քայլ ալ յառաջ դնացին, չիրմի մը դիմաց կանկ առին, վրան նըստան, և ծրար մը բանալով զոր բազուկներնուն տակ ունէին, սկսան ուտել : Կեցայ դիրենք զննելու : Երբոր լմացան, ամենէն աւելի հասակն առածը՝ թղթի մը թերթիկն մէջ ժողովեց բանիկ մը, — ինծի ձուկ և հաց երեցաւ, — և մեծարանօք մը, դերեզմանին մօտ ծակի մը մէջ փոքր ծրարը դրաւ : Ասկէ վերջն երկուքն ալ ծխափողին վառելով հանգստեամբ ծխեցին . տղան ելաւ և սկսաւ վազվազել գերեզմանատան մէջ : Այն ձուկն և այն հացը, մեզի յետոյ մեկնեցին, այն կերակրոյ մասն էր՝ զոր Տաճիկներն 'ի նշան սիրոյ իրենց ազգականացը կը թողուին, հաւանօքն նոր թաղուած . և այն ծակն այն ճեղքն էր՝ որ ամեն մուսուլմանեան թաղելոց դիւայն քով հողոյն մէջ կը թողուի, որպէս զի կարենան իրենց սիրելեաց ողբն և լացը լսել և վարդաճոյ քանի մը կաթիլ ընդունել, կամ ծաղիկ մ'անոյ՜ հոտն առնուլ : Երբոր լմացաւ իրենց գերեզմանական ծխաքարշուծիւնն, ոտք ելան երկու դիւած Տաճիկներն, և տղուն ձեռքէն բռնելով, նոճեաց մէջ աներևոյթ եղան :

Բաւկկալի : — Ելանք գերեզմանատունէն, ուրիշ քրիստոնեայ թաղի մը մէջ դանուեցանք, Բաւկկալի, լայն ճամբաներէ կտրուած, երկու կողմերնին նոր չէնքեր ունենալով . պատեալ 'ի դաստակերտաց, 'ի պարտիզաց, յանկելանոցաց, և 'ի մեծ զինուորանոցաց . Կոստանդնուպօլսոյ ամենէն աւելի ծովէն հեռու արուարձանն . որուն այց երևնէս վերջն, ետ դարձանք յիսկեղջիւր իջնալու համար : Բայց արուարձանին վերջին ճամբուն մէջ, նոր և հանդիսական տեսարանի մ'առաջիկայ եղանք, որ էր յոյն թաղման հանդիսի մ'անցնիլն : Անմուռնչ ամբոխ մ'ուղւոյն

երկու կողմերը կը շարուի . յունական քահանայից խումբ մը կը յառաջէ, ասորնեղործեալ պատմութեանօք . արքեմանտրիար դիւայն վերայ պսակով մը և երկայն ոսկեճաճանչ զգեստով մը . դպիրք կենդանի դոյներով զգեստաւորած : Ազգականաց և բարեկամաց բազմութիւն մը իրենց փարթամագոյն զգեստութեան, և անոնց մէջ բոլորիւք ծաղկամբ արտախորեալ դադաղ մը, որուն վերայ տարածուած է հնգետասանամեայ աղջիկ մը, կերպասեղէն հագած և ակամբը շողշողենի, երեսը բաց, — ձեան պէս սպիտակ փոքր երես մը, թեթև կերպով մը բերանը ցաւազին ազդեցութեան դրից մէջ — և երկու սեւ վարսագեղ հիւրք՝ ուսոցն և լանջացը վերայ սփռուած : Դադաղը կ'անցնի, բաղմութիւնը կը խտանայ, ուղեգնացութիւնը կը հեռանայ, մենք ամայաբնակ փողոցի մը մէջ միայնիկ և մտախոհ կը մնանք :

Այի Տիմիդրի : — Բանկալթիի բլրէն կ'իջնանք, հեղեղատի մը ցամաքուտ անկողնէն անցնելով ուրիշ բլրէ մը վեր կ'ելլենք, ուրիշ արուարձանի մը մէջ կը գտնուինք, Այի Տիմիդրի : Հօս գրեթէ բոլոր ժողովուրդը յոյն է : Ամեն կողմանէ թուխ աչքեր և արծառնաճէ և ուղղորդ քիթեր կը տեսնուին . նահապետական կերպարանով աւերներն . արագաշարժ և խիզախ երիտասարդներ . կնիկներ՝ մազերնին ուսերնուն վերայ . խորամանկ տղոց դէմքեր որ ճամբուն վերայ հաւելու և խոզերու մէջ կը զբօսնուն, սուր ձայնով և ներդաշնակաւոր բառերով օղը լեցնելով : Այն տղոց խումբի մը մօտեցանք որ քարերով կը խաղային, ամենքը միաձայն շաղակրատելով : Անոնցմէ մէկը, գրեթէ ութ տարուան, ամենէն աւելի խեղճ, որ ամեն վայրկեան իր պղտիկ ֆէսը օղը կը նետէր աղաղակելով . — Ձիգոյ, ձիգոյ — (Կեցցէ, կեցցէ) —, դարձաւ յանկարծակի դրան մ'առջև նստած ստահակի մը և աղաղակեց . Բէքբինո, գնտակն ինծի նետէ : — Բռնեցի բազկէն մանկանց գող գըն-

չուի մը շարժմամբ, և ըսի իրեն . — Դու
խտալացի ես : — Ոչ տէր, — պատասխան
տուաւ, — կոստանդնուպոլսեցի եմ : — Եւ
ո՞վ քեզի խտալերէն խօսիլ սորվեցուցեր
է, — հարցուցի . — Այդ ալ զարմա-
նալու բան է, — պատասխանեց, —
մայրս : — Եւ ո՞ր է մայրդ : Այն ատեն
կնիկ մը մօտեցաւ տղայ մը գիրկը, բո-
լորովին զուարթերեալ, և ինծի ըսաւ
թէ բիզացի եմ, լիվոնացի քարակոփի
մը կին, որ ութ տարիէ 'ի վեր 'ի կոս-
տանդնուպոլիս կը գտնուէր, և թէ այն
տղան իր որդին էր : Թէ որ այն կինը
տիկնոջ մը վայելուչ դէմքն ունենար,
գլխոյն վերայ աշտարակաձեւ պսակ մը
և լօղիկ մը ուսոցը վերայ, իմաչքերուս
և իմ սրտիս զիտալիա աւելի կենդանի
կերպով ներկայացուցած չէր կրնար
ըլլալ : — Ի՞նչպէս ես հօս . — հարցուցի
իրեն . — Ի՞նչ կ'ըսես կոստանդնուպոլ-
սոյ վերայ : — Ի՞նչ պիտի ըսեմ, — պա-
տասխանեց միամտութեամբ ժպտելով .
— Բաղա՞յ մ'է որ . . . ճամբարիտն ըսե-
լով ձեզի, ինծի միշտ բարեկենդանի
վերջին օրը կ'երևայ : — Եւ հօս, դոսկա-
ներէն բարբառով բերանը բանալով,
մեզի իմացուց, թէ Տրաքիաց հաւմար ի-
րենց Յիսուսը Մարմէտն է, թէ Տրա-
քիկ մը կրնայ ամուսնանալ ընդ չորս
կանայս, թէ քաջ է այն որ տաճիկ լե-
զուէն բառ մը հասկընայ, և ուրիշ ա-
սոնց նման նորութիւններ : Բայց այն
լեզուով ըսած, այն յունական թագին
մէջ, որ և իցէ չքնաղ լուրէ մ'աւելի
մեզի սիրելի անցան, այնչափ որ՝ եր-
թայնէս առաջ՝ ստահակին ձեռացը
մէջ արծաթէ պզտիկ յիշատակ մը ձգե-
ցինք, և երթալու ժամանակնիս աղա-
ղակեցինք երկուքնիս ալ միաբան . —
Ախ, ինչպէս աղէկ կ'ընէ երբեմն եր-
բեմն պատառ մ'իտալիոյ :

Թարսլվալ : — Փոքր հովիտն անցանք
երկրորդ անգամ, և ուրիշ յոյն թաղի
մը մէջ գտնուեցանք, 'ի Թաթավա . ուր
ստամբուքը օգնութեան պէտք ունենա-
լով, պատճառ առինք կոստանդնուպոլ-
սոյ այն անթիւ պանդոկաց մէկուն ներսն

այցելութիւն ընելու, որ խիստ եղա-
կան տեսիլ մ'ունին, և բոլորն ալ մի-
օրինակ շինուած են : Ամենամեծ սե-
նեակ մ'է, ուսկից մարթ է թատրոն մը
շինել, ընդհանրապէս միայն փողոցին
դռնէն լուսաւորուած, և չորս կողմը
պատեակ վանդակասիւն շինած փայ-
տեայ բարձր ճեմելեօք մը : Մէկ կող-
մէն կայ հաագին փուռ մը, ուր շապի-
կով չարադործ մը ձուկ կը տապակէ,
խորովածներ կը պտըտցնէ, համեմներ
կը խառնէ, և ուրիշ կերպեր կը գործ-
ածէ մարդկային կեանքը կարճեցնե-
լու համար . միւս կողմանէ սեղան մը,
ուր ուրիշ սպառնալից դէմք մը՝ ունկնա-
ւոր զաւաթներով ճերմակ և սև գինի
կը բաժնէ . մէջտեղն և առջևը, առանց
յենարանի փոքր աթոռներ, և աթոռ-
ներէ քիչ մ'աւելի քարձր տրապիզներ,
որ կօշկակարաց սեղանները կը յիշե-
ցնեն : Քիչ մ'ամշալով ներս մտանք,
վասն զի հօն ստորին աստիճանի յու-
նաց և հայոց խումբ մը կար, և կը վախ-
նայինք որ հենգնական հետաքրքրու-
թեամբ մը մեզի նային . այլ սակայն
ոչ ոք արժանի ըրաւ զմեզ հայեցուա-
ծի մը : Կոստանդնուպոլսոյ բնակիչքը,
կարծեմ այս աշխարհիս ամենէն նուազ
հետաքրքիր ժողովուրդներն են . գոնէ
պէտք է սուղան ըլլալ, որպէս զի մէ-
կը իմանայ թէ աշխարհքի մէջ ես կը
նստիմք անկիւն մը և կը սպասենք :
Այլ ոչ ոք կու գար : Այն ատեն հասկը-
ցանք որ կոստանդնուպոլսական պան-
դոկաց մէջ սովորութիւն կայ իրենք ի-
րենց ծառայելու նշան գնացինք փուռը՝
որպէս զի խորոված մ'առնենք, յետոյ
սեղանը՝ Դենեստիս ռեստորանի գինիէն
գաւաթ մ'առնելու, և ամենայն ինչ սե-
ղանին վերայ բերելով, որ ծռնկերնուս
կը հասնէր, աչաց սպիտակը մէկմէ-
կու ցուցնելով, զոհը կատարեցաւ :
Առանց հակառակելու հատուցինք, և
լուծեամբ ելլելով երկուդիւ որ բե-
րաններէն զանչիւն մը կամ հաշիւն
մը չելլայ, բռնեցինք մեր ճամբան դէպ
յոսկեղիւր :

Գաւառ միայն — Տասը վայրկեան ճամբայ ընենէս վերջը, նորէն բոլորովին թուրքաստանի մէջ գտնուեցանք, տաճկական մեծ արուարձանին՝ Գաւառ միայն, բնակաւտ տէրվիններու վանքերով և մզկիթներով, ճամարիտքազաքի մը մէջ, պարտէզներով և բուրաստաններով լեցուն, որ բլուր մը և հովիտ մը կը գրաւէ, և մինչև յիսկեղ յիւր կը տարածուի, Մանտրաքիոյ բլուր հին ծոցը բովանդակելով, Կալազայի գերեզմանատեղւոյն մինչև 'ի հրուանդանն՝ որ 'ի բացուստ կը ցուցնէ միւս ափանցը վերայ Պալադի արուարձանն: Գաւառ միայն բարձրէն կտիարդիչ տեսարան մը կը վայելեաւ, վարն՝ ափանցը վերայ կը տեսնուի թէրսհանէ ահագին նաւարանն. աւազանաց, արուեստանոցաց, հրապարակաց, միթերանոցաց և զինուորանոցաց բաւիղ մը, որ մղոնի մ'երկայնութեամբ կը տարածուի բոլոր յիսկեղներ երկայնութեան վերայ, որ կը ծառայէ պատերազմական նաւահանգստի: Ծովական զօրութեան պաշտօնէին պալատը, չքեղաշուք և թեթև, որ կարծես թէ ջրոյն վերայ կը լողայ, և կը գծէ իր սպիտակափայլ պատկերը Կալազայի գերեզմանատեղւոյն թխատեսակ կանանչին վերայ: Նաւահանգիստը լի ծովորդով շոգենաւերէ և նաւկներէ ընթացեալ, որ կ'երթեկեկն անշարժ զրահաւոր նաւերու և թրիմի պատեւրազմին հին լաստափայտից մէջ, և հանդիպակաց ափանցը վերայ՝ Ստամպուլ, վաղենաթանոսի ջրմուղն՝ որ իր բարձրաթիւի կամարներն երկնից կապոյտին մէջ կը ձգէ, Մէհմէտի և Սիւլէյմանի մեծ մզկիթներն, և տուններու և միւնարէից բազմութիւն մը: Այս տեսիլը լաւագոյն վայելելու համար, մուսուլմանեան սրճարանի մ'առջև նստանք, և տասուերկու գաւաթներէն չորրորդը կամ հինգերորդը խմելիք, որ ուզես չուզես, կոստանդնուպոլիս ըլլալով, ամեն օր պէտք է խմել: Աղքատին սրճարան մ'էր, բայց ինչպէս ամեն տաճկական սրճարանները՝ խիստ նո-

րակերպ: Թերևս ոչ այնչափ տարբեր Մեծին Սիւլէյմանայ ժամանակաց առաջին սրճարաններէն, և կամ անոնցմէ յոր Մուրատ չորրորդը սուսերամերկ կը դիմէր, երբոր գիշերային չընալ կ'ընէր արգելեալ ըմպելոյն չափը իր ձեռքով պատժելու համար: Որչափ կայսերական հրովարտակներու, որչափ աստուածաբանական վէճերու և արիւնուշտ կռիւներու պատճառ եղեր էր այս « թշնամին քնոյ և արգասաւորութեան », ինչպէս կ'անուանէին զայն խիստ իւլէմաններն. այս « ոգին անրոյց և աղբիւր մտաց երեւկայութեան », ինչպէս կը կոչէին զայն լայն թեղանեղ իւլէմաններն, որ է հիմայ, յետ սիրոյ և ծխախոտի, ամենէն աւելի քաղցր սփոփանքն՝ ամենէն աւելի խեղճ ողորմիչ Օսմանցիի մը: Հիմայ սուրճ կը խմեն Կալազայի աշտարակին և Սէրապէրի աշտարակին ծայրերը, սուրճ՝ ամեն շոգենաւերու մէջ, սուրճ՝ գերեզմանատանց, վարսավիւրայից կըրպակաց, բաղանեաց, վաճառանոցներու մէջ: Ով որ գտնուի երստանդնուպոլսոյ որ և իցէ կողմն՝ ուրիշ բան չունի բայց տղազակել՝ առանց դառնալու: Գաֆֆէճի. և երեք վայրկենէն վերջն առջևդ գաւաթ մը կը ծխայ:

Սրճարանն — Մեր սրճարանը բոլորովին սպիտակ սենեակ մ'էր, մարդաչափ բարձրութեամբ փայտով պատած, ամենացած նստարաններով չորս պատերուն երկայնութեամբ: Անկիւն մը փուռ մը կար, որուն վերայ երկնիղ քիթով Տաճիկ մը, պղնձէ փոքր սուրճի ամաններու մէջ՝ սուրճ շինելու ետեւէ էր, որ մի առ մի կը լեցընէր պղտիկ գաւաթներու մէջ, նաև ինքը շաքարը դնելով. որովհետև 'ի կոստանդնուպոլիս ամեն տեղ՝ ամեն եկողին մասնաւոր սուրճ կը պատրաստուի. և աղէկ շաքարած կը բերուի, գաւաթ մը ջրով՝ զոր Տաճիկները միշտ գեռ սուրճը չըրթունքին չափած կը խմեն: Պատի մը վերայ կախուած էր փոքր հայելի մը, և հայելոյն քով մարդ վանդակի տեսակ

մը՝ հաստատուն կոթոված երեք լեցուն վառն զի տաճիկ սրճարանաց մեծա-
գոյն մասը միանգամայն վարտափրա-
յից կրպակներ են, և երբեմն նաև
սրճագործը առումնահան և երակա-
հատ է, և կը զենու իր սպանդները
նոյն սենեկին մէջ՝ ուր ուրիշ յաճա-
խորդք սուրճ կը խմեն։ Դիմացի պա-
տին վրայ՝ ուրիշ մարդ վանդակ մը կա-
խուած էր բիրեղեցայ նարկիլէներով
լեցուն, օձի պէս գալարեալ երկայն
ղիւրթիկը խողովակներով. կաւեղէն
ծխափողներ՝ կեռասնէի փայտէ եղեգ-
ներով։ Մտախոհ հինգ Տաճիկներ բազ-
մացին վերայ նստած էին, նարկիլէն ծը-
խելով. ուրիշ երեք անձինք դրան դի-
մացն էին, անյենարան յարդէ ամենա-
ցած ակժուներու վերայ՝ ի ծունկս նշա-
տած, իրարու քով. կռնակին պատին
յեցուցած և ծխափողը բերանին.
կրպակին պատանին, հայելոյն դիմաց,
ուղտի մորթէ պատմուճան հազած
մեծդի տէրվիշի մը դուլխը կ'ածիլէր։
Ելբորո նստանք՝ ոչ ոք նայեցաւ մեզի,
ոչ ոք կը խօսէր, և սրճագործէն և իր
պատանիէն դուրս, ոչ ոք պզտիկ շարժ-
մունք մը կ'ընէր։ Ուրիշ ձայն չէր լսուէր՝
բայց նարկիլէին ջրոյն խոխոյն, որ կա-
տուաց այն ձայնին կը նմանի որ իրենց
մրափելու ժամանակ կը հանեն։ Ամենքն
ալ շիտակ իրենց դիմացը կը նայէին,
սեւոեալ աչքերով, և դէմքով մը՝ որ ա-
մենեկին բան չէր նշանակեր։ Մոմեղէն
արձանաց պզտիկ թանգարան մը կը
կարծուէր։ Այս տեսարաններէն քա-
նինք մտքիս մէջ տպաւորուած մնացե-
ր են։ Փայտէ տուն մը, նստած Տաճիկ
մը, չքնադազեղ հեռաւոր տեսիլ մը,
մեծ լոյս մը և մեծ լուսթիւն մը. ահա
Տաճկաստան։ Ամեն անգամ որ այս ա-
նունը մտքէս կ'անցնի, նոյն վայրկենին
կ'անցնին նաև այն պատկերներն, ինչ
պէս Հոլանտայի անունը լսած ժամա-
նակս՝ հողմահողով ջաղացք մը և ջրանցք
մը։

Փիայի փաշա։ — Անկից մուսուլմա-
նեան մեծ գերեզմանատան մը քովէն

քերելով, որ Գասըմ փաշայի բլրոյն
բարձրէն կիջնայ մինչև ի թէքսհա-
նէ, ելանք ի վեր դէպ ի հիւսիս, ի-
ջանք փայի փաշայի հովտին մէջ, բու-
րաստանոց և պարտիզաց կանանչու-
թեան մէջ կէս ի կէս ծածկուած պղզ-
տիկ արուարձան մը. և կեցանք մղի-
թին դիմաց որ իր անունը կը կրէ։
Սպիտակ մղիթի մ'է, շնորհաշուք վեց
գմբէթներով բարձրացած, նաղելի կա-
մարներով և սիւնակներով պատած գաւ-
թէ մը, ամենաթեթիւ մինարէն մը և
սոսկավիթիսար նոճիներու պսակ մը։
Այն վայրկենին բոլոր շրջակայ տունե-
րը գոցուած էին, ճամբաներն ամայի,
նոյն իսկ մղիթին դաւիթն՝ անապատ.
միջօրէի լոյսն և ստուերն ամենայն ինչ
կը պարուրէին. և միայն գոռեխներու
բզկիւնը կը լսուէր։ Նայեցանք ժամա-
ցոյցը. տասուերորդին երեք վայրկեան
կը պակսէր. թուրքաց կանոնական
հինգ ժամերէն մէկն, որոնց մէջ միւշեզ-
դինները կ'երևան մինարէներուն բար-
ձանց վրայ՝ իսլամի խորհրդական քա-
րոզը հորիզոնին չորս կողմն աղաղակե-
լու համար։ Աղէկ գիտէինք որ կոս-
տանդնուպօլիս մինարէ մը չկայ ուր այն
որոշեալ ժամուն չերևայ, ժամացուցի
մը ինքնաշարժ մեքենային պէս ան-
վրէպ, մարդարէին պատգամաւորն։
Եւ սակայն մեզի օտար կ'երևար՝ որ ա-
հագին քաղաքին այն ծայրն, այն մե-
նաւոր մղիթիթին վերայ, այն խոր լուս-
թեան մէջ, պիտի տեսնուէր այն կեր-
պարանն և հնչէր այն ձայնը։ Ժամա-
ցոյցը ձեռքս բռնեցի, և ուշադրու-
թեամբ նայելով վայրկենից ալաքին և
մինարէին տամալեաց դռնեկին, գրե-
թէ սովորական տան մ'երրորդ դստի-
կոնին բարձրութեան չափ, մեծաւ հե-
տաքրքրութեամբ կեցայ սպասեցի։ Սը-
լաքը վաթսներորդ սև գծին դպաւ, և
ոչ ոք երեցաւ։ — Զի դար — ըսի։ —
Ահաւասիկ — պատասխանեց Եունք։ Եւ
րեցած էր։ Տամալեաց պսակը զինքը
բոլորովին կը ծածկէր, բաց յերեսէն,
որուն՝ հեռաւորութեանը համար գծա-
գրութիւնը չէր որոշուեր, քանի մը ման-

երկրորդ անշարժ կեցաւ. յետոյ ա-
կանջները մատերով խփեց, և դէմքն
երկինք բարձրացրենով, աղաղակեց
դանդաղ, դողդոջուն և ամենասուր
ձայնով մը, հանդիսական և եղերա-
կան բարբառով մը, սուրբ խօսքերն,
որ նոյն վայրկեանին կը հնչեն Ափրիկէի,
Ասիոյ և Եւրոպայի բոլոր միներեւելոն
վերայ. — Մեծ է Աստուած: Ձիք՝ բայց
մի Աստուած: Մէհմէտ է մարդարէ
Աստուծոյ: Եկայք յաղօթել: Եկայք ՚ի
փրկութիւն: Աստուած մեծ է: Մի է
Աստուած: Եկայք յաղօթել: — Յետոյ
տամայեաց վերայ կէս շրջան մ'ըրաւ և
դէպ ՚ի հիւսիս նոյն խօսքերը կրկնեց.
ապա յարեւել, ապա յարեւմուտս, և
յետոյ աներևոյթ եղաւ: Այն վայրկե-
անին հեռաւոր ձայնի մը վերջին արձա-
գանգները տկար մեղմ հասան ականջ
ներնուս, որ յօգնութիւն կանչողի մ'ա-
ղաղակին կը նմանէր, և յետոյ ամե-
նայն ինչ լռեց, և մենք ալ քանի մը
վայրկեան անմուռնջ մնացինք, տխրու-
թեան տարտամ զգացմամբ մը՝ իրեւ
թե՛ այն երկու ձայները մեզի միայն ա-
ղօթելու թելադրած ըլլային, և անհետ
ըլլալով այն ուրուականն, յԱստուծոյ
թողութեմ երկու անձանց պէս՝ հով-
տին մէջ միայնակ մնացած ըլլայինք:
Ոչ բնաւ երբեք զանգակի հնչիւն մը
այսպէս խորագգած ազգած էր սրտիս.
և միայն այն օրն հասկըցայ, թէ ինչու
Մէհմէտ հաւատացեալքն աղօթից կան-
չելու համար, հին իսրայելական փողոյն
և քրիստոնէական հին կոչնակին նախա-
գասեր է մարդուն աղաղակը: Եւ այն
ընտրութեան վերայ երկար ժամանակ
տարտամեցաւ. ուստի քիչ մնաց որ բո-
լոր Արեւելք հիմակուան ունեցածէն շատ
տարբեր կերպարանք մ'առնուր. վասն
զի թէ որ կոչնակն ընտրուէր, որ յետոյ
զանգակի փոխուեցաւ, յայտնի է որ
միներէն ուրիշ ձևի փոխուած պիտի
ըլլար, և արեւելեան քաղաքի և գաշտա-
կան նկարի ամենէն աւելի շնորհալից
դրոշմներէն մէկը պիտի կորսուէր:

Օգ մէյտան: — Փիալի փաշայէն գար.

Պրաւ Դ.

ձեալ բլրոյն վրայ ելելով, դէպ յարեւ-
մուտք, մերկ հողոյ ընդարձակածաւալ
միջոցի մը մէջ գտնուեցանք, ուսկից
բոլոր Ոսկեղջիւն և բոլոր Ստամպուլը կը
տեսնուէր, էյիւպի արուարձանէն մին-
չև Պալատան բլուրը, չորս մընս պար-
տէզներու, մշկիթներու, մեծութիւն
մը, գեղեցկութիւն մը, երկնային տես-
լեան մը պէս արժանի ծուր դրած նկա-
տելու: Նետից հրապարակն՝ Օգ մէյ-
տանն էր, ուր ըստ սովորութեան Պար-
սից թագաւորաց՝ կ'երթային Սուլթան-
ներն աղեղ քաշելու: Անհաւասար միջո-
ցով դեռ կան հօն ցրուած քանի մը կը-
ճայ սիւնակներ, արձանադրութեամբք
դրոշմալ, որ կը ցուցնեն տեղերն ուր
կայսերական նետերն ինկան: Կայ դեռ
հօն փառաւոր հովանոցը, բարձրաւան-
դակով մը, ուսկից Սուլթաններն աղե-
ղը կը լարէին: Ալակողմը՝ դաշտաց մէջ
փաշաներու և պէյերու երկայն գիծ մը
կը տարածուէր, զարմանաց կենդանի
կէտեր, որոնց հետ փատիշահն իր յա-
ջողակութեանը հարկ կու տար. ձա-
խակողմը՝ կայսերական տանէն երկու
տասան մանկլաւիկ, որ կը վազէին նե-
տերը ժողովելու և ինկած տեղը նշա-
նելու. չորս կողմը՝ ծառոց և թփոց ե-
տն՝ քանի մը յանձնապատասխան ծաճիկ-
ներ եկած մեծ Արքային վեհաժողովի
պարանքը դիտելու համար. և բարձրա-
ւանդակին վերայ խրոխտապանծ ըմ-
բըշի կեցուածքով կը փողփողէր Մահ-
մուտ, պետութեան ամենէն աւելի կու-
րովի ազեղնաւորն, որուն փայլակնա-
դէտ աչքերն հանդիսականաց ճակատ-
ները կը խոնարհեցնէին, և նշանաւոր
մօրուքը, Տաւրոս լեռին աղաւաւին պէս
թուխ, հեռուէն դուրս կը ցատկէր մեծ
պաղպաջուն վերարկուին վերայ՝ սըրս-
կեալ արեամբ եհնիւնեանց: Հիմակ ա-
մեն բան փոխուած և հետեակ եղած
է. Սուլթանն իր պալատին գաւիթնե-
րուն մէջ պտուտակաւոր ատորճանակ
կ'արձկէ, և հետեակաւորն Օգ մէյտա-
նի մէջ նշան առնելու փորձ կ'ընէ:
Մէկ կողմէն տէրփիշներու վախք մը կայ,
միւս կողմէն մենաւոր սրճարան մը. և

բոլոր դաշտը բացաւայրի մը պէս խռ-
պանացեալ և տիրատեսիլ է :

Փիլիի փառայ : — Ոչ մէյտանէն դէպ
յոսկեղիւր իջնալով, ուրիշ մուսուլմա-
նեան պղտիկ արուարձանի մը մէջ գըռ-
նեցեցաք, փրիի փառայ կոչուած, թեւ
ևս առաջին Սէլիմի սոյն հռչականուն
մեծ վեղերէն՝ որ զՍիւլէյմանի մեծն
զատարարկեց : փրիի փառան՝ Պալա-
դի Հրէից արուարձանին վերայ 'ի հե-
ռուստ կը նայի, Ոսկեղիւր արիանցը վե-
րայ գըռուած : Հօն՝ ուրիշ բանի չհանդի-
պեցանք բայց քանի մը շուներու և քա-
նի մը թուրք պառաւ մուրացկաննե-
րու : Բայց այս ամայութիւնը թողուց
մեզի որ հանգստեամբ արուարձանին
կազմութիւնը քննենք : Եղանակն բան
մէջ : Այն արուարձանին մէջ, ինչպէս
կոստանդնուպոլսոյ ուրիշ որ և ինչ կող-
մը թէ որ մէկը մանայ, կամ ծովէն
կամ մերձակայ բլրէ մը զայն տեսնելէն
վերջը՝ նոյն տպաւորութիւնը կ'ունենայ
ինչ որ դերասանից տախտակամածէն
գեղեցիկ կաքաւագրական (chorégra-
phique) տեսարան մը նայելու ըլլայ՝
հանդիսականաց տեղէն տեսնալէն վեր-
ջը : Կը զարմանաս որ այն տգեղ և դը-
ծով իրաց խառնուրդը կարենայ այս-
պիսի գեղեցիկ առաջօք պատրանք մը
յուշով բերել : Կարծեմ՝ աշխարհքիս
մէջ չկայ քաղաք մը՝ յորում գեղեցկա-
թիւնն ըլլայ այսպէս պարզ արտաքին
երևոյթ՝ ինչպէս 'ի կոստանդնուպոլս :
Եթէ Պալադէն նշմարես, նազելի աւան
մ'է փրիի փառան, բոլոր ծիծաղկոտ
գոյներ, կանանդութեամբ պատկառ-
բեալ, որ Ոսկեղիւր ջրոց մէջ 'ի հայե-
ւոյ կը տեսնուի, և սիրոյ և բերկրու-
թեան հազարաւոր պատկերներ կը
զարթուցանէ :

Մտնալուդ պէս՝ ամենայն ինչ կ'անհե-
տանայ : Շինական տունքոն են, տօնա-
վածառաց տաղաւարներու պէս նկա-
րած յուր գոյներ, նեղ և ալտեղի
գաւթիներ, որ վհուկներու բնակարան
կը կարծուին : Բոշելից թզնեանց և նո-
ճեաց ծառատունիք, աւերակք խա-

փանեալ պարտեղներ, ամայի փողոց-
ներ, խեղճութիւն, աղտեղութիւն,
տխրութիւն : Բայց իջիր զառ 'ի վայր
մը, ցատկէ նաւակի մը մէջ, և հինգ
թիալարութենէ ետքը՝ կը տեսնաս գիւ-
թակաւ աւանն, իր գեղեցկութեան և
իր բարեձեւութեան բոլոր շքեղութեա-
նը մէջ :

Խաւ քեօյ : — Առաջ երթալով, միշտ
Ոսկեղիւր արիանց երկայնութեան վե-
րայ, կ'իջնաք ուրիշ արուարձանի մը
մէջ, ընդարձակ, բազմամարդ, նորա-
տեսիլ, ուր տաւրիս քայլէն կ'իմանանք
որ ալ թուրքաց մէջ չենք : Ամեն կող-
մանէ կը տեսնուին տղայք աղտեղու-
թեամբ և փոշով ծածկուած, որ հողոյ
մէջ կը թաւալին. անգեղեցիկ և ցնցո-
տաւոր պառաւանք, որ հնոտեաց շեղ-
ջերով և փերեզակներով լեցուն տանց
գոններուն վերայ կ'ամսացեալ ձեռք
կ'աշխատին. աղտեղի երկայն զոնս
տուց մէջ փաթթուած մարդիկ, գլուխ-
ներնուն չորս կողմը պատած պատա-
ռատուն թաշկինակով մը, որ պատե-
րուն քովէն զաղտուկ կ'անցնին. պա-
տահանաց վրայ նիհար դէմքեր. տունէ
տուն կախուած ցնցոտիք. ամեն կողմ
չորցած խոտահամբար և տիղմ : Խարա-
յելական արուարձանը խաս քեօյ՝ Ոսկե-
ղիւր հիւսիսային արիանց հրէական
բնակտրանէն է, որ միւս արիանցը վրայ
եղածին գիմսն է, որուն հետ խրիմի
պատերազմին միջոց կը միացնէր զայն
փայտէ կամուրջ մը, որուն ալ հետքը
չերևար : Հօսկէ կը սկսի երկայն շղթայ
մ'ալ նաւարանաց, զինուորական վար-
ժոցաց, զինուորանոցաց և զինուոց հրա-
պարակաց, որ գրեթէ Ոսկեղիւր մինչև
ծայրը կը տարածուի : Այլ ասկէ զատ
բան մը չտեսանք, վասն զի արդէն ոչ
սրունքնիս և ոչ գլուխնիս կը ներէին
զայն : Արդէն բոլոր տեսած բաներնիս
մտքներուս մէջ կը չլիթէին, բնիզի կե-
րևար որ շտաբ մը ճամբայ կ'ընենք.
հայրենեաց սիրոյ հիւանդութեան թե-
թև զգացմունքով մը բացակայ բերան
կը մտածէինք, և ետ դարձած կ'ըլլայինք,

թէ որ զմեզ չբռնէր հին կամրջին վրայ հանդիսաբար ըրած առաջարկութիւնն, և թէ որ ետեւ դեռ երբեք չըլլար, ըստ իրեն սովորութեան, Ախիտայ¹ մեծ զօրաց շուն երգեցելով:

Հայրձը օղոյն: — Յառաջ ուրիմն: Ուրիշ թուրք գերեզմաննոց մը կ'ընդ միջնէր, ուրիշ բլրոյ մը վերայ կ'ելլէր, կը մտնէր ուրիշ արուարձանի մը մէջ, արուարձան Հայրձը օղոյն, բընակեալ 'ի խառն ժողովոցոց. պզտի քաղաք մը, ուր ամեն փողոցի դարձուածքին նոր ցեղ մը և նոր կրօնք մը կը դտնուի: Կ'ելլաս, կ'իջնաս, կը մագլան, կ'անցնիս 'ի միջոյ գերեզմանաց, մզկիթաց, եկեղեցեաց, սինակոկայից. կը պորտիս գերեզմանատանց և պարտիկաց չորս դռմը. կը հանդիպին տիկնական կերպարանքով գեղեցիկ հայուհիներ և թեթևազնայ տաճկուհիք որ ընդ քօղով կը նային. կը լսուի խօսիչ յունարէն, հայերէն և սպանեօլերէն, — Հրէից սպանեօլերէն — և կը քալես, կ'ընթանաս: Վերջապէս պէտք է հասնինք այս կոստանդնուպօլսոյ ծայրը, — կ'ըսենք մեր մէջը: — Ամենայն ինչ այս երկրիս վրայ սահման մ'ունի: Արդէն Հայրձը օղոյն տունները կ'անօտին, պարտեզները կը սկսին կանանչնալ, միայն բնակարանաց խումբ մը կայ, մէջերէն կ'անցնինք, վերջապէս հասանք

Սիւտլիշէն: — Առաջ ուրիշ արուարձան մը հասանք: Սիւտլիշէն քրիստոնէայ արուարձանն է, որ բլրոյ մը վերայ կը բարձրանայ, պարտեզներէ և գերեզմանատուններէ պատած. այն բլրոյն վրայ՝ որուն ոտքն հին ատեն Ոսկեղջեր երկու ափունքը միայն մէկ շինուած կամրջին զլուխը կը հանգչէր: Բայց այս արուարձանն, թե՛ Սատուած ուզէ, վերջինն է, և մեր արշաւանքը կը լմննայ: Տուններուն մէջէն կ'ելլենք՝

¹ Վերսի հռչակաւոր խաչագիւղի կենդանի երգչականին յօրինած անուանի նուագաւոր թատերներէն (орган) մէկը:

հանգստեան տեղ մը փնտրուելու համար. դժուարեւանելի և մերկ բլրէ մը վեր կ'ելլենք, որ Սիւտլիշէն կոնակը կը բարձրանայ, և կոստանդնուպօլսոյ ամենեւնի աւելի մեծ հրէական գերեզմանատան անոյն կը դտնուինք. ընդարձակ գաշտ մը, շատ մ'իսկած քարերէ ծածկուած, որոնք երկրաշարժէ կործանած քաղաքի մը տխուր երևոյթը կ'ընծայեն, առանց ծառի մը, առանց ծաղկի մը, առանց խոտի մը, առանց ճամբու մը հետոց. ախրազին միայնութիւն մը՝ որ զսիրտ կը նեղէ, մեծ թշուառութեան մը տեսարանին պէս: Գերեզմանի մը վրայ կը նստինք, զէսոյ յոսկեղջիր դարձած, և հանգչելու առանձնիս, ակնկառոյց կը նայինք անհուն և սխրալի շրջապատներին՝ որ չորս կողմէ մը կը տարածուի: Վարը՝ կը տեսնուին Սիւտլիշէն, Հայրձը օղոյն, խաս քէօյ, փիրի փաշայ, ծովուն կապոյտին և գերեզմանատանց և բուրաստանաց կանանչին մէջ փակուած արուարձաններու փախուստ մը. ձախալողը՝ ամառաբնակ Օզ մէյդաանն, և Գասըմ փաշայի հարիւր մինարէներն. աւելի հեռու՝ Ստամպօլ, անձայրածիր և խառնակ. Ստամպօլէն անդին, Սիւտլիշէն քաղաքակաւտար գիծերը, գրեթէ երկնից մէջ աներևոյթ եղած. առջև՝ ճիշդ Սիւտլիշէն դիմաց, Ոսկեղջիր միւս կողմէն, Էյիւպի խորհրդաւոր արուարձանն, որուն հոյակապ շիրիմները, կըճեայ մզկիթները, գերեզմաններով սփռուած հովանաւոր զառ 'ի թափներն, ամայի ճամբաներն, և լի տըխրութեամբ և շնորհօք թագստոցները մի առ մի կ'որոշուին. և Էյուպի աջակողմէն ուրիշ գեղեր՝ որ ջրոյն մէջ կը նային, և յետոյ Ոսկեղջեր յետին դարձուածքն, որ ծառերով և ծաղիկներով զարդարուած երկու ափանց մէջ կը կորսուի: Այն շրջապատներին վրայ ընդլայնելով աչքով, խոնջ, գրեթէ կէս քուն կէս արթուն վիճակի մը մէջ, յանգչաւտս, երաժշտութեան վերայ առնունք այն գեղեցկութիւնն, երգելով չգիտեմ ինչ. հարցընենք մեզի՝

ով էր մեռեալն որուն վրայ նստեր ենք .
յարդի չիւղով մը մըջիւնոցի մը մէջ հե-
տադօտները . խօսիւնք հազարաւոր յիմա-
րութիւններ . երբեմն երբեմն ըսենք
մեզի . — Բայց արդարեւ 'ի կոստան-
դնուպօլիս ենք . — յետոյ մտածենք թէ
կեանքը կարճ է , և թէ ամենայն ինչ ու-
նայնութիւն է . և յետոյ ուրախանանք
զուարճանանք . այլ 'ի խորս սրտի կը
զգանք եթէ չիք յերկրի գեղեցկութիւն
որ տայ ստուգիւ կատարեալ իմն խըն-
դութիւն

Նշաւակն . — Արեւ մոնալու ատեն
կ'իջնանք յՈսկեղիւր , կը մոնանք քա-
ռաթի նաւակի մը մէջ , և դեռ չարտա-
սանած — կալադա — բառը , նազելի
նաւակն արդէն հեռացեր է ափունքէն .
Եւ նաւակը (զայրգ) ստուգիւ ջրոյ վե-
րայ սահող նաւակաց մէջ վայելագոյնն
է . կոնստոյայէն աւելի երկայն է , այլ ա-
ւելի նեղ և աւելի բարակ . քանդա-
կեալ , նկարեալ և ոսկեզօծեալ . ոչ ղեկ
ունի և ոչ նստարան . կը բազմիս բարձի
մը կամ գորգի մը վրայ , այնպէս որ
միայն գլուխդ և ուսերդ դուրս կը մնան .
երկու ծայրերն այնպիսի կերպով վեր-
ջացած են որ կրնայ երթալ երկու ուղ-
ղութեամբ . պղտի շարժումընք մ'ալ
զուգակշռութիւնը կը կորսընցնէ , աղե-
ղան նեախ մը պէս կը սլանայ ափուն-
քէն , կարծես թէ իբրեւ ծիծառ մը
ջրոյն երեսէն կը թռչի , ամեն տեղէն
կ'անցնի , կը սահի և կը փախչի՝ հալա-
ծեալ գլխին մը պէս իր հազարաւոր
գոյներն ալեաց մէջ ցուցընելով . Մեր
թիավարներն երկու գեղեցիկ երիտա-
սարդք էին , կարմիր ֆէշով , կապուտա-
կազոյն շապիկով մը , մեծ ամենասպի-
տակ տաբատով մը , մերկ բազուկներով
և սրունքներով . երկու քսանամեայ ըմ-
բիշներ , պղնձագոյնք , մաքուրք , զուարթք
և յանձնապատանք , որ ամեն թի վա-

րենուն 'ի բոլոր երկայնութեամբ մա-
կոյկն յառաջ կը տանէին . ուրիշ նաւակ-
ներ երազասլաց քովերնէս կ'անցնէին՝
որ հազիւ կը տեսնուէին . կ'անցնէին
մօտիկ բաղից սարմեր , թռչուններ կը
ճախրէին գլուխներնուս վրայ , մեծա-
մեծ յարկածածուկ նաւակներ կ'անց-
նէին մեր քովէն լի քողածածուկ տա-
հիկ կանամբք , և մերթ ընդ մերթ ծո-
վու մամուլներն ամենայն ինչ կը ծած-
կէին 'ի մէջ : Եթէ Ոսկեղիւր ծայրէն
տեսնայիր , այն ժամուն , նորատեսիլ
կերպարանք մը կ'ընծայէր քաղաքը :
Ասիական եղերքը չէր տեսնուեր՝ նաւա-
հանգստին ծռութեանը պատճառաւ .
երկարածիդ լճի մը պէս կը փակէր Ոսկ-
եղիւրը զՊալատան բլուրն . երկու բը-
լրոց ափունքն հսկայացեալք կ'երևնա-
յին . և Ստամպուլ հեռի 'ի բացեայ՝ կա-
պուտակ և մոխրագոյն գոյներով դիւր-
իլանելի աստիճանաւորութեամբ մը
ընդ աղօտ նկարեալ . կախարդական
քաղաքի մը պէս ահագին և թեթեւ ,
կարծես թէ ծովուն վրայ կը լողար և
երկնից մէջ կը կորսուէր : Նաւակը կը
թռչէր , երկու ափունքը կը փախչէին ,
ծոցերը ծոցերու , անտառք անտառաց ,
արուարձանք արուարձանաց կը յաջոր-
դէին . և որչափ որ արագ արագ յա-
ռաջ կ'երթայինք , ամենայն ինչ շուր-
ջանակի կ'ընդլայնէր և կը բարձրանար ,
քաղաքին գոյները կը կորսուէին , հո-
րիզոնը կ'արտաչիկանար , լուրերն ոս-
կեղէն և ծիրանի ցլումներ կ'արձրկէին ,
և առ փոքր փոքր խորին հիացում մը
մեր հոգւոյն վրայ կ'իջնէր , խառն ընդ
անհուն իմն քաղցրութեան , որ զմեզ
կը ծիծաղցընէր և չէր թողուր խօսեցը-
նել : Իրբոր մակոյկը կալադայի նաւա-
մատոյցը հասաւ , պէտք եղաւ որ նա-
ւավարներէն մէկն ականջներնուս ա-
ղաղակէ . Monsù! Arrivar! — և իբրեւ
երազէ մ'արթնցանք :

Կը շարունակուի :